Ազգ
Azg
24 ՅՈՒՆՈՒԱՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 3(5087)
ISSN: 1829-1651

# Երուսաղեմում ընտրում են 93-րդ պատրիարքին

*2-րդ փուլ անցան Նուրհան, Տաթեւ, Արիս արքազանները*

**Երեկ Երուսաղեմում մեկնարկեց Հայոց պատրիարքի ընտրության առաջին փուլը: Պատրիարքի ընտրությանը մասնակցում են միայն Սբ Հակոբյանց միաբանները՝ 37 հոգի: Համաձայն կարգի, միաբանները կներկայացնեն թեկնածուների հնգանուն ցանկ, առավելագույն ձայներ ստացած միաբանները կմասնակցեն ընտրությունների հաջորդ փուլին, որը կկայանա այսօր:**

**Ինչպես Երուսաղեմից «Ազգ»-ին հաղորդեց Ստամբուլում հրատարակվող «Ժամանակ» թերթի թղթակից Սեւան Տեյիրմենճյանը, ժողովը սկսվել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դահլիճում, ժամը 10-ին: Եռօրյա նստաշրջանը բացվել է պատրիարքական տեղապահ Արիս արք. Շիրվանյանի նախագահությամբ եւ Սեւան արք. Ղարիբյանի ատենապետությամբ:**



**Մեկ այլ աղբյուրից, դարձյալ Երուսաղեմից, «Ազգին» տեղեկացրին, որ երեկվա նիստի սկզբում, դեռեւս մեզ անհայտ պատճառներով ինքնաբացարկ է հայտարարել պատրիարքական աթոռի գլխավոր հավակնորդներից մեկը՝ Վիգեն արք. Այգազյանը: Ինքնաբացարկ է հայտարարել նաեւ Բաբկեն ծ. վրդ. Անուշյանը: Այնուհետեւ առաջարկվել եւ քվեարկությամբ հաստատվել է թեկնածուների հնգանուն ցուցակը, որը ներկայացնում ենք ըստ նրանց ստացած քվեների թվի. լուսարարապետ Նուրհան արք. Մանուկյան՝ 21 ձայն, Բրազիլիայի թեմի առաջնորդ Տաթեւ արք. Ղարիբյան՝ 18, պատրիարքական տեղապահ Արիս արք. Շիրվանյան՝ 16, Արգենտինայի թեմի առաջնորդ Գիսակ արք. Մուրադյան՝ 15, Ամմանի հոգեւոր հովիվ Սեւան արք. Ղարիբյան՝ 15:**

**Սպասվում է, որ այսօր, միաբանական ժողովի 2-րդ նիստին վերոհիշյալ հնգանուն ցանկից առավելագույն 3 ձայն ստացածների միջեւ տեղի ունենա նոր քվեարկություն եւ 3-րդ փուլ անցնեն 2 թեկնածու, իսկ ավելի ուշ նրանցից ընտրվի Երուսաղեմի հայոց 93-րդ պատրիարքը:**

**Հիշեցնենք, որ երկարատեւ հիվանդությունից հետո հոկտեմբերի 12-ին վախճանվեց Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:**

Հ. Հ.

# Սեւակ Շահինի սպանությունը չի գոհացնում թուրք հրոսակին

*Սկսել է հալածել Սամաթիայի հայությանը*

Ապրիլի 24-ին կլրանա ժամկետային զինծառայող Սեւակ Շահինի սպանության 2-րդ տարին: Հիշեցման կարգով նշենք, որ նա ծառայում էր Բաթմանի զորամասում, ծառայությունն ավարտելուց 23 օր առաջ ջարդային Քըվանչ Ագաօղլուի արձակած կրակոցով ծանր վիրավորվել, ապա մահացել էր հոսպիտալում:

Չնայած փորձագիտական եզրակացությունների եւ ականատեսների վկայությունների առկայությանը, Սեւակ Շահինի սպանությունը ձեւակերպվեց իբրեւ պատահական կրակոցի հետեւանք, եւ դատարանը նույնիսկ հրաժարվեց կալանքը որպես խափանման միջոց կիրառել մարդասպանի նկատմամբ:

Օրերս «Թարաֆ» թերթը հարցազրույց է վարել հանգուցյալի մոր՝ տիկին Անիի եւ հոր՝ պրն Կարապետի հետ, որը հունվարի 22-ի համարում արտատպել է timeturk.com կայքէջը:

Որդու սպանությունը ողբերգություն է յուրաքանչյուր ծնողի համար: Դա ավելի քան ծանր բնույթ է ստանում, երբ դիտավորյալ սպանությունը ձեւակերպվում է որպես դժբախտ պատահար, որ մարդասպանը ազատության մեջ վայելի կյանքի հաճույքները: Ելնելով այս հանգամանքից՝ ավելորդ ենք համարում հարցազրույցի մանրամասներին անդրադառնալը: Պարզապես նշենք «Ինչո՞ւ Սեւակ Շահինին ընտրեցին» հարցին պրն Կարապետի պատասխանը. «Այդ օրը ապրիլի 24-ն էր, նաեւ Սուրբ Զատիկի տոնը: Մի հայ պետք է սպանվեր: Դրանում համոզված ենք: Սպանվեց իմ որդին: Կարող էր սպանության զոհ դառնալ մեկ ուրիշ հայ: Ըստ երեւույթին հետեւյալ հրամանն են արձակել. «Այսօր սպանելու ենք մի հայի»: Սեւակն այդ առումով հարմար թիրախ էր»:

Երկրորդ հարցը, որն ուզում ենք նշել, հետեւյալն է. «Վերջին շրջանում ակտիվացել են հարձակումները Սամաթիայի հայերի դեմ: Դա ձեզ չի՞ կաշկանդում»: Հարցին տկն Անին պատասխանել է. «Իհարկե կաշկանդում է: Զգում ենք ազգայնամոլության վերակենդանացումը: Մեզ ասում էին. «Կամ սիրիր, կամ էլ լքիր»: Սիրեցինք, բայց սպանվում ենք: Անհանգստացած ենք հատկապես մեր երիտասարդների համար: Ի՞նչ նպատակով են առեւանգել տարեց կնոջը Սամաթիայում կամ առեւանգման փորձ ինչո՞ւ կատարել մի ուրիշի նկատմամբ: Առաջ սպանության, առեւանգման, վնասվածք պատճառելու դեպքեր տեղի չէին ունենում, պարզապես «գյավուր» էին ասում, հետո ասողների հետ մենք ընկերանում էինք»:

Այսինքն խնդիրը սոսկ Սեւակ Շահինի հենց ապրիլի 24-ին իրականացված սպանությունը չէ, ոչ էլ մարդասպանի նկատմամբ ցուցաբերված անսահմանափակ հանդուրժողականությունը, այլեւ պոլսահայության պատանդի կարգավիճակն ու համայնքի գլխին կախված թուրքական վտանգը:

Հ. Չ.

# Ռուս-ամերիկյան «ոչ բարեկամություն» Հարավային Կովկասում

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Ադրբեջանում ամերիկյան դեսպան Ռիչարդ Մորնինգսթարը «Թրենդին» տված հարցազրույցում խոսելով տարածաշրջանում ու Աֆղանստանի հետ կապված ամերիկյան ծրագրերի մասին՝ հստակ ընդգծել է. «Ադրբեջանը տարածաշրջանում անվտանգության ապահովման առումով անչափ ուժեղ գործընկեր է ԱՄՆ-ի համար»: Մեկ այլ առիթով ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը «ՌԻԱ Նովոստիին» ասել է. «Մոսկվան, իհարկե, կշարունակի պատասխանել Վաշինգտոնի ոչ բարեկամական քայլերին, սակայն մեր դիրքորոշման հիմքում ընկած է ռուս-ամերիկյան կապերի զարգացումը՝ բոլոր ուղղություններով»: Կարո՞ղ ենք արդյոք ասել, թե Ադրբեջանի՝ ԱՄՆ-ի համար «տարածաշրջանային ուժեղ գործընկեր» լինելը Մոսկվայի համար ընկալելի է որպես «ոչ բարեկամական քայլ», պարզվում է, կարող ենք, եւ ահա թե ինչու:**

## Ո՞ւմ դեմ է պատերազմի պատրաստվում Ադրբեջանը

**2012-ի միլիտարիզմացման համաշխարհային ինդեքսի (GMI) համաձայն՝ Ադրբեջանն աշխարհի ամենառազմականացված երկիրն է: Նավթային եկամուտներից կուտակված միջոցներից եթե 2004-ին հարեւան երկիրը ռազմական նպատակների համար ծախսում էր 174 մլն դոլար, ապա 2012-ին այս ցուցանիշը եղել է 3,2 մլրդ դոլար: Ընդ որում՝ Ադրբեջանը զենք ու զինամթերք է գնում բազմաթիվ երկրներից՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից եւ իհարկե Թուրքիայից, Իսրայելից: Միայն 2011-ին Ադրբեջանն Իսրայելից գնել է 1,6 մլրդ դոլար արժողությամբ զինամթերք՝ հատկապես թեւավոր հրթիռներ, անօդաչու թռչող սարքեր, իսկ Ադրբեջանի ռազմածովային ուժերը թարմացվել են ԱՄՆ-ի եւ Թուրքիայի օգնությամբ: Կա տեղեկություն, որ շուտով Բաքուն սուզանավեր կստանա, որոնք հարմարեցված կլինեն Կասպից ծովում շահագործելու համար: Այսինքն, եթե Ադրբեջանը զինամթերք է կուտակում, հետեւաբար պատերազմի է նախապատրաստվում, ու եթե տրամաբանորեն նրա առաջին թիրախը Լեռնային Ղարաբաղն է՝ իր հայ բնակչությամբ, ապա հարց է առաջանում, ղարաբաղյան երկրորդ հավանական պատերազմում Բաքվի ինչի՞ն են պետք ռազմածովային ուժերի թարմացումը եւ սուզանավերը, այն էլ, կրկնենք՝ ամերիկյան: Այս առումով ռուսական «Վոենոյե օբոզրենիե» պարբերականը գրում է. «Ադրբեջանը, ունենալով Թուրքիայի քաղաքական, ռազմական աջակցությունը, Իսրայելի ու ՆԱՏՕ-ի հետ սերտ հարաբերությունները, ինչպես նաեւ խիստ ագրեսիվ տրամադրված լինելով Իրանի նկատմամբ, պատերազմի է նախապատրաստվում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի դեմ. երկարաժամկետ հեռանկարում հավանական է պատերազմը նաեւ Իրանի ու Ռուսաստանի դեմ»:**

**Ռուսական պարբերականն իր այս թեզին թերագնահատորեն վերաբերվողներին հիշեցնում է, որ 2008-ին եւս ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ Վրաստանը պատերազմ կսկսի Ռուսաստանի դեմ:**

*Տես էջ 8*

# Ռիելթորները նամակ գրեցին նախագահին

Թեքեյան կենտրոնում անշարժ գույքի 100-ից ավելի գործակալությունների ներկայացուցիչների մասնակցությամբ երեկ տեղի ունեցած հավաք-ժողովում կազմվեց նամակ՝ ուղղված ՀՀ նախագահին: Այն ստորագրողները իրենց դժգոհությունն էին հայտնում հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Արտոնագրային վճարների մասին» օրենքում փոփոխություններից, նշելով, որ օրենքի կիրառմամբ անշարժ գույքի ոլորտը կանգնելու է բազմաթիվ խնդիրների առջեւ՝ աշխատատեղերի կրճատում, որոշ ընկերությունների գործունեության դադարեցում եւ այլն:

Հիշեցնենք, որ Ռիելթորների եւ գնահատողների միությունը ստեղծել է «60000-ին դեմ» հասարակական նախաձեռնություն, որը բողոքում է արտոնագրային վճարների դաշտ այս ոլորտը ներառելուց, որի դեպքում անշարժ գույքի գործակալությունները յուրաքանչյուր աշխատակցի դիմաց պետք է վճարեն ամսական 60 հազար դրամ արտոնավճար:

Այս հարցի վերաբերյալ ֆինանսների նախարարությունից մեզ խոստացել էին հավելյալ պարզաբանումներ տրամադրել, բայց դեռեւս որեւէ պարզաբանում չենք ստացել:

Ա. Մ.

# Անշարժ գույքի գործարքների քանակի նվազում եւ գների աննշան աճ նոյեմբերին

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ի նոյեմբերին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15724 գործարք, ինչը 9,7 տոկոսով ցածր է հոկտեմբերի եւ 7,6 տոկոսով 2011-ի նոյեմբերի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը նոյեմբերին հոկտեմբերի համեմատ նվազել է 5,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա նոյեմբերի համեմատ՝ աճել 3,9 տոկոսով: 4305 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 77,3 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Օտարված անշարժ գույքի 34 տոկոսը բնակարաններն են, իսկ օտարման գործարքների քանակի 33,9 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 57,6 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012-ի հոկտեմբերի համեմատ նոյեմբերին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 21,1 տոկոսով, իսկ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ՝ 17,6 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 0,5 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել. *Տես էջ 3*

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | նոյեմբեր 2011 թ. | նոյեմբեր 2012 թ. | հոկտեմբեր 2012 թ. |
| Կենտրոն | 452000 | 420300 | 419500 |
| Արաբկիր | 335300 | 348000 | 347000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 260800 | 277000 | 276100 |
| Նոր Նորք | 232200 | 241050 | 239000 |
| Ավան | 242200 | 249000 | 248050 |
| Էրեբունի | 232900 | 242000 | 241500 |
| Շենգավիթ | 232500 | 247000 | 245000 |
| Դավթաշեն | 257000 | 267500 | 267000 |
| Աջափնյակ | 232800 | 237500 | 235600 |
| Մալաթիա-Սեբաստիա | 220700 | 233100 | 232100 |
| Նուբարաշեն | 140100 | 143500 | 142000 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 258000 | 264200 | 263000 |

# Քարոզարշավի մետամորֆոզները




Նախագահական ընտրություններին հետեւող քաղաքացին հարցնում է ընկերոջը. «Էս երկու օրվա քարոզարշավից ի՞նչ հասկացար»: «Ի՞նչ քարոզարշավ», զարմանում է երկրորդը: Ու առաջինն սկսում է պատմել՝ ջանալով քաղաքականապես հասուն դարձնել ընկերոջը: Բայց իր համար էլ աննկատ՝ նա ոչ թե քարոզարշավն է պատմում, այլ քարոզարշավի այս օրերի կուրյոզները.

«Պետությանը 600 հազար դոլար եկամտահարկ մուծողին բա «Մալբորոյի» փող չունենալու մասին են հիշեցնո՞ւմ», ջղայնացել էր Հրանտ Բագրատյանն էն էտոսագետի վրա, որն անուն էր կպցրել Բագրատյանին: Էտոսում էլ թարսի պես թութուն-մութունի մասին բան չկա՝ մեր էտոսի գործողությունների ժամանակ Կոլումբոսը թութունը դեռ ամերիկաներից չէր բերել: Էդ էտոսագետն էլ, մեր մեջ ասած,«Մառլբոռոյից» ի՞նչ է հասկանում, կամ էլ կոնյակից ի՞նչ է հասկանում, որ խոսում է: Էտոսում կոնյակի մասին էլ կարծես բան չկա, որ նախկին վարչապետի՝ 5000 շիշ կոնյակի մեծ մասը խմելու վերաբերյալ մի կարգին միտք հնչեցներ: Դե, Բագրատյանն էլ էս էտոսագետին, թե՝ «Կուզեմ ցիստեռնով կոնյակ կխմեմ, կուզեմ փոքրիկ կոլեկցիոն շշերով, դու էս ո՞ւմ խաղերն ես խաղում»:

Նախագահի թեկնածուներն ընդհանրապես առավոտից իրիկուն միմյանց են սեւացնում: Սեւերն ավելի են սեւանում, սպիտակներն իրենց գույնով հասնում են սեւերին, բայց լավ է, ոչ մեկը նեգր դեռ չի դարձել: Սովոր ենք սեւանալու ու սեւացնելու՝ հայերից ի՞նչ նեգր:

«Հացադուլ, միայն հացադուլ»՝ Պանիկովսկու նման կրկնում է մեկը: «Միգուցե՝ միայն համատեղ հացադո՞ւլ՝ անձնական որոշմամբ, թե՞ պատվեր կատարելով, կամ չունի», կտրում է մյուսը: Դե, այստեղ կարեւորը համատեղն է, համատեղ թեկնածու առաջադրելը չստացվեց, դե գոնե համատեղ հացադուլը ստացվի՝ քարոզարշավի ծրագրային դրույթ է էն Անդրիաս անունով թեկնածուի մոտ, դեռ ուզում են մյուս թեկնածուներից էլ միանան: Հա, Րաֆֆին մազերը չէր կտրել, քարոզարշավի շրջանակում հասցրեց կտրել, էդ քյար մնաց, դեռ մետրոյով ճամփորդելն էլ մտցրեց ընտրարշավի գրաֆիկի մեջ՝ 100 դրամ ծախս է շատ-շատ, էժա՞ն՝ ուրիշների թանկ-թանկ կորտեժների համեմատ: Ու, ընդհանրապես, ով քարոզարշավի ընթացքում մեկ ակնթարթ հանդիպի Րաֆֆի Հովհաննիսյանին՝ երկրից խռովածներ, աբիժնիկներ, խեղճուկրակ ժողովուրդ, հենց սեղմի Րաֆֆու ձեռքը՝ իրեն երկրի մի մասնիկը կզգա: Ու մասնիկ զգալուց քվեարկելն էլ մեկ քայլ է:

Դե, Սերժ Սարգսյանն էլ որ ասում է՝ գնալու ենք դեպի ապահով Հայաստան՝ «ԱՊՊԱ», ուրեմն չի թաքցնում, որ մենք անապահով Հայաստանում ենք ապրում. էլի լավ է՝ խոստովանում է: Ուրեմն հույս կա, որ հետո անապահովներին էլ մի բան կհասնի:

Չէ, բայց իսկապես՝ թեկնածուների կարգախոսները լսես՝ մեկը մեկից մազալու. ճիշտ որ՝ «Հայաստանը հո միայն Երեւանը չէ», սա կարելի է բացել՝ «Երեւանն էլ հո միայն Հյուսիսային պողոտան չէ, Երրորդ մասի դռերն էլ Երեւան են», կամ՝ ընդամենը 100 քայլ... եւ կընկնես փոսը կամ էլ՝ գուցե դուրս գաս փոսից, հը՞: «Հնարավո՞ր է»: Կամ՝ «Հնարավո՞ր է» «Ապահով Հայաստան», դե գոնե՝ «Մեկ անգամ միասին» հնարավոր դարձնեինք դա, մանավանդ որ «Եկել է պատմական պահը» «Հայրիկյան նախագահ» ունենալու, իսկ մերոնք Քեռի Թորոսի մասնագետ են աչք խոթում: Մինչդեռ պետք էր «Հայրենյաց սուրբ սիրով մենք վեհանանք, Հայաստանն ազատենք» էտոսագետից, ամենագետներից եւ տգետներից. «Ես ձեզնից մեկն եմ», էն Աստված, կամ որպես կարգախոս՝ «Վերեւն Աստված կա»: Դոլարի վրա էլ է գրված՝ «Աստծուն ենք մենք վստահում»:

Աստված քաղաքականացված եւ չքաղաքականացված ընտրողների հետ:

ԱՐՏԵՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Քաղաքապետարանի աշխատանքները բուժհամակարգում

Նախորդ տարի առողջապահության ոլորտում Երեւանի քաղաքապետարանի կատարած աշխատանքները երեկ ամփոփեց առողջապահության վարչության պետ **Կամսար Բաբինյանը**:




2012-ին առողջապահության ոլորտում քաղաքապետարանի կատարած աշխատանքներից նշենք մի քանիսը՝ հիմնանորոգվել է մայրաքաղաքի թիվ 22 պոլիկլինիկայի մասնաշենքը, ընդհանրապես բոլոր պոլիկլինիկաներում կատարվել են բարելավման աշխատանքներ, նորոգվել են դրանց մուտքերի դռները, մի քանի պոլիկլինիկաներում ներդրվել է տեղական ջեռուցման համակարգ:

Կամսար Բաբինյանը խոսեց նաեւ «Շտապ օգնության» ծառայությունում 2011-2014 թվականների համար նախատեսված ծրագրով արված աշխատանքներից: Ըստ նրա՝ «Շտապ օգնությանը» նվիրաբերվել է շուրջ 80 մեքենա, ծառայության բուժաշխատողները վերապատրաստվել են, ու 11 տոկոսով էլ ավելացել է Երեւանում շտապ օգնության կանչերի թիվը:

Հաշվի առնելով սրտանոթային հիվանդությունների տարածվածության մակարդակը՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում, ըստ Կ. Բաբինյանի, տեղադրվել են նոր սարքավորում ու թթվածնի կենտրոնական համակարգ, իսկ Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտում բացվել են 2 նոր բաժանմունք ու այստեղ եւս տեղադրվել են ստենդավորման սարքավորումներ:

2012-ին Երեւանի քաղաքապետարանը նաեւ նախաձեռնել է ակցիաներ, դրանցից մեկի ընթացքում՝մարտի 8-ից ապրիլի 7-ը, վիրահատվել են շուրջ 586 կանայք:

Իսկ այս տարվա ծրագրերի վերաբերյալ Կամսար Բաբինյանն առայժմ տեղեկացնում է, որ նախատեսում են վերազինել Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող պոլիկլինիկական լաբորատոր դիագնոստիկ ծառայությունները: Քաղաքապետարանի բյուջեից 2013-ին բուժհիմնարկների վերազինման համար հատկացված գումարը կազմում է 70 միլիոն դրամ: Իսկ հիմնանորոգման աշխատանքներ այս տարի կտարվեն «Արաբկիր» եւ թիվ 9 մանկական պոլիկլինիկաներում:

Վերջում պատասխանելով լրագրողների հարցերին՝ Կամսար Բաբինյանն անդրադարձավ ատամնաբուժական ծառայություններին առնչվող հարկային փոփոխություններին, որոնք թերեւս ազդեն նաեւ մանկական պոլիկլինիկաների վրա՝ դրանք պետական, թե մասնավոր: Սակայն անկախ հարկային փոփոխություններից, նրա կարծիքով, 0-7 տարեկան երեխաների բուժսպասարկումը կշարունակվի պետպատվերով: Ի. Պ.

«ՊԱՏՐԻՈՏՆԵՐԸ» «ՓԵԹՐԻՈԹՆԵՐԻ» ԴԵՄ

# Գերմանացի զինծառայողները՝ ոտնձգության թիրախ Թուրքիայում

## *Դրան հակազդեցությամբ արձագանքել է գերմանական մամուլը*

Անցյալ տարվա վերջին ամիսներին Թուրքիայի օրակարգը առաջնահերթ նշանակությամբ զբաղեցնում էր երկրի տարածքում «Փեթրիոթ» հակահրթիռային համակարգեր տեղակայելու հարցը: Դրա անհրաժեշտությունը վարչապետ Էրդողանի կառավարությունը բացատրում էր Սիրիայի հնարավոր հարձակման հավանականությամբ, իսկ այդ համակարգերը թուրքական կողմին տրամադրող ԱՄՆ-ը, Գերմանիան եւ Հոլանդիան տուրք էին տալիս թուրքերի նկրտումներին: Ընդ որում «Փեթրիոթների» տեղակայմանը դեմ էին ոչ միայն խորհրդարանական ընդդիմադիր բոլոր 3 կուսակցությունները, այլեւ ժողովրդի մեծամասնությունը, մասնավորապես Սիրիային սահմանակից շրջանների բնակիչները, որոնք բազմիցս հանդես են եկել բողոքի ցույցերով ինչպես «Փեթրիոթների», այնպես էլ «Ազատ Սիրիայի բանակի» տեղաբաշխման դեմ:

Համենայն դեպս երկրի տարածքում «Փեթրիոթների» տեղակայման եւ գործարկման աշխատանքների համար 350 գերմանացի զինծառայող դեռեւս անցյալ տարվա վերջերին գործուղվել էր Թուրքիա: Հունվարի 21-ին էլ Իսկենդերունի նավահանգիստ են հասել հոլանդական եւ գերմանական հակահրթիռային համակարգերով բեռնված նավերը: Ինչ վերաբերում է ամերիկյան համակարգերին, ապա դրանք, ինչպես երեկ նշել էր «Դունիա բուլթենի» լրատվական գործակալությունը, պահեստավորված են «Ինջիռլիքի» ռազմաօդային բազայում:

«Փեթրիոթները» կտեղակայվեն Իսկենդերունից 200 կմ հեռավորության վրա գտնվող Մարաշի շրջակայքում եւ փետրվարի սկզբին, ինչպես խոստացել են գերմանացի զինծառայողները, պատրաստ կլինեն գործարկման: Խնդիրը սակայն սոսկ «Փեթրիոթները» չեն, այլ այս համակարգերի հետ նաեւ օտարերկրացի զինծառայողների տեղաբաշխումը երկրում առանց Թուրքիայի ազգային մեծ ժողովի համապատասխան որոշման, որը հակասում է թուրքական սահմանադրության 92-րդ հոդվածին, ինչպես նաեւ բախվում է սահմանամերձ շրջանների բնակչության հակազդեցությանը:

Այս հակազդեցությունը, «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, հանգեցրել է ոտնձգության հենց Իսկենդերուն քաղաքում. գերմանացի 5 զինծառայող քաղաքի կենտրոնում ենթարկվել է ամբոխի հարձակման, մյուսները հալածանքի խանութում կամ շուկայում: Թեեւ թուրքական անվտանգության ուժերը միջամտել եւ անվնաս զորամաս են հասցրել հարձակման ենթարկված գերմանացի զինծառայողներին, սակայն գերմանական մամուլը կայքէջերում հակազդեցությամբ իսկույն արձագանքել է թուրքական ոտնձգությունների բոլոր մանրամասներին: Հ. Չ.

# Գյումրին՝ ԱՊՀ 2013 թվականի մշակութային մայրաքաղաք

**Անցած դեկտեմբերի 5-ին Աշգաբադում տեղի ունեցած ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստում Գյումրին հայտարարվել է 2013 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք: Ավելի ստույգ՝ մայրաքաղաքներից մեկը: «ԱՊՀ մշակութային մայրաքաղաքներ» ամենամյա միջպետական ծրագիրը գործում է 2010 թվականից, ԱՊՀ հումանիտար համագործակցության խորհրդի եւ նույն համագործակցության միջպետական հիմնադրամի նախաձեռնությամբ: Այս տարի Գյումրուց բացի մշակութային մայրաքաղաքներ են հռչակվել նաեւ Բելառուսի Մոգիլյով ու Ադրբեջանի Գաբալա քաղաքները:**

**Ինչպես երկու իր պաշտոնավարման 100 օրվա ամփոփման ժամանակ նշել է Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը, մշակութային մայրաքաղաքի նախատեսվող միջոցառումների՝ տեղում քննարկված նախագիծն արդեն ուղարկվել է ՀՀ մշակույթի նախարարություն: Առաջարկվող միջոցառումների փաթեթը ուսումնասիրությունից հետո ներկայացվելու է ԱՊՀ համապատասխան գործադիր մարմնին: Գյումրուն ծանոթանալու նպատակով այս օրերին նաեւ քաղաք է ժամանելու համագործակցության երկրների արվեստագետների խումբը:**

**Միջպետական այս ծրագրով, որը մեկնարկելու է մոտավորապես մայիսի վերջին եւ շարունակվելու է ամբողջ տարվա ընթացքում, նախատեսվում է իրականացնել մշակույթի եւ արվեստի տարբեր ոլորտները ներառող ավելի քան հինգ տասնյակ միջոցառումներ՝ փառատոններ, ցուցադրություններ, ներկայացումներ, հյուրախաղեր, գիտաժողովներ, մրցույթներ, ճանաչողական միջոցառումներ եւ այլն: Հրատարակվելու են գրքեր, գրքույկներ ու քարտեզներ, մշակութային Գյումրին ներկայանալու է նաեւ հանրապետության մարզերում:**

**Սա որքան պատվավոր, նույնքան ծանր ու ծախսատար աշխատանք է լինելու, որին հարկ կլինի համակողմանիորեն նախապատրաստվել, պատրաստել նաեւ քաղաքի ենթակառուցվածքները: Ծրագիրն իրականացվելու է համաֆինանսավորմամբ՝ ԱՊՀ երկրների գործադիր մարմնի եւ ՀՀ մշակույթի նախարարության կողմից, որոշ ներդրում է անելու նաեւ Գյումրու քաղաքապետարանը:**

**Ակնկալվում է, որ սրանով լավ հնարավորություն կստեղծվի քաղաքում մշակութային կյանքն աշխուժացնելու, տարբեր այլ ծրագրեր իրականացնելու համար:**

**Գ. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանը բնապահպանական աղետի շեմին

Հայաստանի բնապահպանական գերխնդիրը ընդերքի անխնա օգտագործումն է: Բնապահպանները համոզված են, որ հենց այս հարցն է Հայաստանին դարձնում առավել խոցելի, եւ հենց ընդերքի անխնա օգտագործման խնդիրը պետք է դառնա առաջնային, որպեսզի հետագայում երկիրն ավելի մեծ խնդիրների առաջ չկանգնի: Թեպետ նախորդ տարին աչքի ընկավ բնապահպանական ակցիաներով, ու ամենից շատ քննադատվեց ընդերքի մասին ԱԺ-ի ընդունած օրինագիծը, այնուամենայնիվ, այս ոլորտում դրական տեղաշարժ չի նկատվում:



«**Ազգ**» օրաթերթը բազմիցս անդրադարձել է հանքարդյունաբերության ոլորտում առկա խնդիրներին, ներկայացնելով տասնյակ դեպքեր, երբ հանքարդյունաբերությունը կատարվել է ոչ պատշաճ մակարդակով՝ բաց եղանակով հանքերի պայթեցում, թափոնների նետում մոտակա գետը կամ լիճը, բաց պոչամբարներ, ինչի հետեւանքով լայն թափ ստացած հանքարդյունաբերությունը, որը նաեւ կառավարության ընդունած գերակա ճյուղերից մեկն է, ազդում է ոչ միայն բնության, գյուղատնտեսության, այլեւ առողջության վրա:

Բնապահպան Կարինե Դանիելյանի ներկայացմամբ՝ բնապահպանական ամեն մի հանդիպում-քննարկման ժամանակ բարձրացվում է երկու հարց՝ ընդերքի օգտագործում եւ ՀԷԿ-եր: «Երկուսի պարագայում էլ մենք որեւէ լուրջ արդյունքի չենք հասել», ասում է նա:

Այսօր Հայաստանում գրանցված է 136 ՀԷԿ: Բնապահպան Ինգա Զառաֆյանի գնահատմամբ՝ բոլորը հասկանում են ՀԷԿ-երի պատճառած վնասը, սակայն ոչինչ չեն ձեռնարկում, որովհետեւ ՀԷԿ-երը բիզնեսի շատ լավ միջոց են դարձել, եւ հենց դա է պատճառը, որ ՀԷԿ-երի թիվն այսքան շատ է: Զառաֆյանի մեկնաբանությամբ՝ ՀԷԿ-երի պատճառած վտանգն այնքան մեծ է, որ եթե նույն վերաբերմունքը շարունակվի եւս մի քանի տարի, ապա գետ եւ գետի համակարգ հասկացությունները կվերանան:

Բնապահպաններն անցյալ տարվա ամենամեծ խնդիրն են համարում նաեւ Սեւանա լճից մեծ քանակությամբ ջրի բացթողումը: Հիշեցնենք, որ գյուղատնտեսության նախարարությունը տարին հայտարարեց երաշտի ու գյուղացիներին ջուր տրամադրելու համար դիմեց ԱԺ-ին՝ օրենք ընդունել, որ մայիս ամսից սկսած, երբ մեկնարկի ոռոգման ամենաթեժ սեզոնը, լճից 317 մլն խմ ջուր բաց թողնվի:

Մայրաքաղաքի ամենալուրջ խնդիրը կանաչ գոտիների վերացումն ու շինարարություններն են, ինչի հետեւանքով օդի աղտոտվածությունը մի քանի անգամ գերազանցում է նորման: Բնապահպանները շեշտում են, որ ներկայացվածները նոր խնդիրներ չեն, դրանք բարձրաձայնվում են տարիներ շարունակ, սակայն սայլը տեղից չի շարժվում: Դրան զուգահեռ, յուրաքանչյուր տարի, բնապահպանական առումով մեր երկիրը մի քանի քայլ հետ է գնում՝ կանաչ տարածքները ճանաչվում են գերակա շահ ու հատվում, անգամ քաղաքներում արդեն հանքեր են մշակվում ու շատանում երկու կամ երեք գլխով կենդանիների ծնունդները: Միջազգային կոնֆերանսներում բնապահպանների կատարած հայտարարությունը, որ Հայաստանը բնապահպանական աղետի շեմին է, շարունակում է մնալ օրակարգային:

Հ. Հ.

# Անշարժ գույքի գործարքների քանակի նվազում եւ գների աննշան աճ նոյեմբերին

*1-ին էջից*

**Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ի նոյեմբերին վաճառվել են 437 բնակարաններ, որոնց քանակը հոկտեմբերի համեմատ աճել է 3,1 տոկոսով, իսկ 2011-ի նոյեմբերի համեմատ՝ 24,5 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները նոյեմբերին հոկտեմբերի համեմատ մարզերում աճել են 0,5 տոկոսով:**

**Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները նոյեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ-ի գինը 153 հազար հազար դրամ է կազմել: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Արմավիրը՝ 119 հազար դրամ, Եղեգնաձորը՝ 118 հազար դրամ, Իջեւանը եւ Գորիսը՝ 116 հազար դրամ, Աշտարակը՝ 113 հազար դրամ, Մասիսը՝ 112 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:**

**2012-ի նոյեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 471 գործարք, որից 118-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2012-ի նոյեմբերին հոկտեմբերի համեմատ նվազել է 25,8 տոկոսով, իսկ մարզերում՝ մնացել անփոփոխ: 2011-ի նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 6,3 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7,3 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 0,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | նոյեմբեր 2011 թ. | նոյեմբեր 2012 թ. | հոկտեմբեր 2012 թ. |
| Կենտրոն | 470000 | 469100 | 467500 |
| Արաբկիր | 372200 | 376200 | 375000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 279800 | 288100 | 286200 |
| Նորք-Մարաշ | 308300 | 313100 | 312500 |
| Ավան | 253200 | 265700 | 264600 |
| Էրեբունի | 237100 | 233200 | 232000 |
| Շենգավիթ | 242500 | 250050 | 249500 |
| Դավթաշեն | 269200 | 269100 | 267000 |
| Աջափնյակ | 242000 | 243100 | 242400 |
| Մալաթիա-Սեբաստիա | 230000 | 233200 | 232100 |
| Նուբարաշեն | 144800 | 146200 | 145100 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 277200 | 280600 | 279300 |

**Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 0,3 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո, ինչպես միշտ, Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն՝ 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 154 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը՝ 152 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 134 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Գորիսը՝ 127 հազար դրամ, Ջերմուկը՝ 124 հազար դրամ, Իջեւանը՝ 122 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ-ի դիմաց:**

**Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2012-ի նոյեմբերին, 2011-ի նոյեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10,7 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 20,4 տոկոսով: Ընդ որում Երեւանում աճել է 75 տոկոսով, իսկ մարզերում՝ 17,1 տոկոսով:**

**2012-ի նոյեմբերին հոկտեմբերի համեմատ վարձակալության գործարքները նվազել են 2,8 տոկոսով, իսկ 2011-ի նոյեմբերի համեմատ՝ աճել 38,4 տոկոսով:**

**Նոյեմբերին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 155 գործարքներ, որից 91-ը՝ Երեւանում: 2012-ի հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 8,8 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 26 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 36,2 տոկոսով: 2011-ի նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 35,7 տոկոսով, Երեւանում՝ 52,4 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 28 տոկոսով:**

**Այսպիսով, եթե հոկտեմբերին Հայաստանի անշարժ գույքի շուկայում զգալիորեն ավելացել էր գործարքների քանակը, ապա նոյեմբերին կրկին նվազել է: Գները շարունակում եմ մնալ առանց մեծ փոփոխությունների, ինչպես եւ կանխատեսել էինք նախկինում:**

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՑ

# Հայաստան-Եվրոմիություն համագործակցություն

**Երեկ տեղի ունեցավ եվրոպական կառույցների հետ ՀՀ պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստ, որը նախագահում էր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը:**

**Միջգերատեսչական հանձնաժողովի հերթական՝ 14-րդ նիստի օրակարգում տեղ էին գտել մի շարք հարցեր, այդ թվում՝ ՀՀ-ԵՄ համագործակցության վերջին զարգացումների եւ կարեւորագույն ձեռքբերումների, մասնավորապես՝ ՀՀ-ԵՄ Ասոցացման, Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի եւ վիզաների դյուրացման մասին համաձայնագրերի ուղղությամբ, ինչպես նաեւ 2013թ. 1-ին եռամսյակի ընթացքում կատարվելիք աշխատանքների եւ ծրագրերի ներկայացումը, ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013թթ. միջոցառումների ցանկի 2012թ. 4-րդ եռամսյակի կատարողականի՝ ՀՀ գերատեսչությունների կողմից իրականացվող աշխատանքների ամփոփ ներկայացումը:**

**Արթուր Բաղդասարյանը իր խոսքում մասնավորապես նշեց. «Հայաստան-Եվրոմիություն համագործակցությունը 2012թ. արդյունավետ ընթացք ունեցավ: Քաղաքական համագործակցության առումով մեր հարաբերությունները զարգացան դինամիկ տեմպերով: 2013թ. ավարտին արդեն, համաձայն ՀՀ-ԵՄ ճանապարհային քարտեզի, մենք Եվրոմիության հետ կարող ենք հասնել Ասոցացման պայմանագրի ստորագրմանը: Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի ընթացքը նույնպես դրական է: Շուրջ 3300 ապրանքատեսակներ, GSP+ համակարգի համաձայն, կարող են Եվրոպական միություն արտահանվել առանց մաքսավճարների, եւս 3700 արտադրատեսակներ կարտահանվեն նվազեցված սակագներով: Սա շատ կարեւոր նշանակություն ունի մեր տնտեսության զարգացման համար»:**

**«Արդարադատության, ազատության եւ անվտանգության ոլորտներում համագործակցության արդյունքում ԵՄ-ն ՀՀ-ի հետ ստորագրեց վիզաների դյուրացման համաձայնագիր, ըստ որի այս տարվանից սկսած մեր քաղաքացիների 16 տարբեր սոցիալական խմբեր եվրոպական երկրներ կայցելեն առանց ավելորդ բյուրոկրատական քաշքշուկների, վիզաների գների նվազեցման եւ արտոնյալ ռեժիմների գործադրման միջոցով»,- նշեց Արթուր Բաղդասարյանը:**

**Նիստում Միջգերատեսչական հանձնաժողովի անդամները հանդես եկան իրենց գերատեսչությունների մասով կատարված աշխատանքների մասին զեկույցներով:**

# Վրաց փոխարտգործնախարարը Իվանիշվիլու հայտարարությունը չի հավանում, միլիարդատերն էլ՝ փոխվարչապետին

**Աբխազական երկաթուղին վրացական իշխանավորների համար դեմ ու կողմ արտահայտվելու պատճառ է դարձել: Երկաթուղին վերագործարկելու մտադրության կողմ արտահայտվողներին հակադարձողներ են գտնվում՝ պատճառաբանությամբ, թե Ռուսաստանի հետ այդօրինակ շփումը Վրաստանի արտաքին քաղաքական օրակարգում չի տեղավորվում: Մինչդեռ ակնհայտ է, որ այսպիսի պատճառաբանությամբ թեկուզ երկրի վարչապետին դեմ դուրս գալու տարբերակը նախընտրելի է, քան ուղղակի նախկին իշխանական վերնախավի մաս լինելու պատճառով ներկաների հետ չհամաձայնելու դիրք բռնելը:**

**Որ Վրաստանը դիտարկում է աբխազական երկաթուղով հաղորդակցություն վերականգնելու տարբերակը՝ բնավ էլ նորություն չէ: Եվ այն, որ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Երեւան նախորդ շաբաթ կատարած այցելությանը կրկին շեշտեց դա, չի կարող դիտարկվել որպես երկնքից ընկած նորություն վրաց պաշտոնյաների համար:**

**Սակայն արի ու տես, որ ոմանք փաստացի երկրի բռնած դիրքորոշման մասին ոչ թե մինչ այդ եղած հայտարարություններից են տեղեկանում, այլ միայն այն ժամանակ, երբ այդ մասին հայտնում է վարչապետ միլիարդատերը, այն էլ հարեւան երկիր այցելության շրջանակներում:**

**Վրաստանի փոխարտգործնախարար Նիկոլոզ Վաշակիձեն լքել է իր պաշտոնը՝ հենց պատճառաբանելով, թե վարչապետ Իվանիշվիլու երեւանյան հայտարարությունը աբխազական երկաթգծի առնչությամբ այնպիսի արտաքին քաղաքական կուրս է, որին ինքը համաձայն չէ: 2010-ից փոխարտգործնախարար Վաշակիձեն հարցն իր համար սկզբունքային է որակել:**

**Մյուս կողմից, Հայաստանում Իվանիշվիլու կատարած հայտարարությունների պատճառով փոխարտգործնախարարի պաշտոնը լքող Վաշակիձեն, երեւի թե որպես փորձված դիվանագետ, ամեն ինչ չէ, որ ներկայացնում է, քանի որ, ի շարս այլ պարտավորությունների, հենց Վաշակիձեն էր հիմնականում ներգրավված Ռուսաստանի հետ Վրաստանի՝ Ժնեւյան բանակցություններում:**

**Այս շեշտադրումն անելուց հետո կարելի է ենթադրել, որ Վրաստանի արտգործնախարարի տեղակալը վարչապետի հետ անհամաձայնության մեջ է ավելի շուտ հենց Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշման առնչությամբ:**

**Ի դեպ, փոխարտգործնախարարը միակը չէ, որ անհամաձայնություններ ունի միլիարդատեր վարչապետի հետ: Վրաստանում սպասվող նախագահական ընտրությունների առնչությամբ էլ իրար չեն հասկացել Իվանիշվիլին ու նորանշանակ պաշտպանության նախարար, փոխվարչապետ Իրակլի Ալասանիան՝ թե ինչպիսին պիտի լինի Վրաստանը՝ նախագահական-խորհրդարանական տիրույթում ու հասկապես, թե ինչպես ու ի դեմս որ թեկնածուի է հոկտեմբերին խորհրդարանական ընտրություններում հաղթած ընդդիմադիր կոալիցիան հանդես գալու նախագահական ընտրություններում: Հունվարի 21-ի դրությամբ Ալասանիան կզբաղվի միայն բանակի հարցերով, քանի որ այլեւս փոխվարչապետ չէ՝ «վարչապետի հետ ծանր խոսակցությունից հետո»:**

Վ. Պ.

Մամուլ

# Կառավարության՝ մամուլին աջակցելու քաղաքականությունը մամուլն արժեզրկելու քաղաքականություն է

## Հետազոտության արդյունքները

1998 թ.-ին լրագրողական կազմակերպությունները ու տպագիր լրատվամիջոցների ներկայացուցիչները դիմեցին ՀՀ կառավարությանը՝ ֆինանսապես ծանր վիճակում հայտնված մամուլին ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ) ազատելու խնդրանքով: Կառավարությունն ընդառաջեց խնդրանքին՝ միայն թերթերի իրացման մասով ազատեց ավելացված արժեքի հարկից, բայց ոչ գովազդը, այլ որոշեց ԱԱՀ-ն լրատվամիջոցներին փոխհատուցել սուբսիդավորման եղանակով: Կառավարության որոշումով փոխհատուցման ենթակա լրատվամիջոցների ցանկում ընդգրկվեց մարզային, գրական, մանկապատանեկան եւ ազգային փոքրամասնությունների մամուլը: Մանկական մամուլ հրատարակողների դիմումների հիման վրա որոշ ժամանակ հետո ցանկից առանձնացվեց մանկական մամուլը եւ ֆինանսավորվեց առանձին տողով: Պետական աջակցության ցանկում մնաց միայն մարզային, գրական եւ ազգային փոքրամասնությունների մամուլը:

Կառավարության աջակցության քաղաքականությունը, որը կոչվում է «Աջակցություն ոչ պետական մամուլին», անփոփոխ է արդեն 15 տարի, միայն մի բացառությամբ, որ անցնող տարիների ընթացքում ընդլայնվել է սուբսիդավորվողների ցանկը: Ինչպես ՀՀ ժուռնալիստների միության նախագահ **Աստղիկ Գեւորգյանը** նշեց այդ թեմայով հրավիրված քննարկման (http://hetq.am/arm/multimedia/videos/98/) ժամանակ, «այդ աջակցությունն ստանալու ճանապարհներ գտան զանազան նորահայտ ամսագրեր, գերատեսչական թերթեր»: Ներկայումս ոչ պետական մամուլի հրատարակման եւ տպագրման աշխատանքների համար պետական աջակցություն տրամադրվում է ավելի քան 70 անուն տպագիր հրատարակությունների՝ հետեւյալ ուղղություններով.

1. գրական-մշակութային մամուլ,
2. գիտական-հանրամատչելի մամուլ,
3. ՀՀ մարզերում հրատարակվող մամուլ,
4. մարզական մամուլ,
5. ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող մամուլ:

Կառավարության աջակցության քաղաքականությունն իրականացնողը ՀՀ մշակույթի նախարարությունն է՝ հանձին նախարարության ենթակայությամբ գործող «Գրքի եւ հրատարակչական գործի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության: Սուբսիդավորման դիմող լրատվամիջոցներից հայտերի ընդունումը կազմակերպում եւ իրականացնում է «Գրքի եւ հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Ըստ ընդունված աշխատանքային կարգի՝ ներկայացված հայտերը քննարկում է մշակույթի նախարարին կից գործող «Պետական աջակցությամբ հրատարակվող ոչ պետական մամուլի անվանումների ցանկը ձեւավորող խորհուրդը» եւ առաջարկություն է ներկայացնում նախարարին: Նախարարը ներկայացված առաջարկությունների հիման վրա հաստատում է դրական եզրակացություն ստացած հայտատուների վերջնական ցանկը եւ ներկայացնում է կառավարության հաստատմանը:

ՀՀ մշակույթի նախարարին կից պետական աջակցությամբ հրատարկվող ոչ պետական մամուլի անվանումների ցանկը ձեւավորող խորհուրդն ստեղծվում է մշակույթի նախարարի հրամանով եւ հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է: Խորհրդի կազմում լրագրողական միջավայրը ներկայացնող ընդամենը երկու անձ է ներգրավված՝ ՀՀ ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանը եւ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանը: Խորհրդի մյուս անդամները մշակույթի նախարարության աշխատակիցներն են:

Խորհուրդը հետեւյալ գործառույթն է իրականացնում՝ նախարարին առաջարկություններ է ներկայացնում.

ա) պետական աջակցությամբ հրատարակվող ոչ պետական մամուլի անվանացանկի մասին՝ ըստ կազմակերպությունների,

բ) պետական աջակցությամբ հրատարակվող ոչ պետական մամուլին հատկացվող գումարների չափի մասին:

Սուբսիդիա ստանալու համար ընդամենը երկու չափանիշ է սահմանված.

1. թերթի համար նվազագույնը ամսական 1, իսկ տարեկան առնվազն 12 համարի հրատարակում՝ 1 մամուլ ծավալով եւ 500 օրինակ տպաքանակով,
2. ամսագրի համար 3 ամիսը մեկ, իսկ տարեկան 4 համարի հրատարակում՝ 5 մամուլ ծավալով եւ 500 օրինակ տպաքանակով:

ՀՀ մշակույթի նախարարությունից հայտնում են, որ սուբսիդիայի տրամադրման հիմնական նպատակը բնակչությանը տեղեկատվությամբ ապահովելն է: «Տրամադրվող սուբսիդիայի միջոցով լրատվամիջոցները կարողանում են ապահովել իրենց լրատվամիջոցի հրատարակման պարբերականությունը, ինչպես նաեւ լուծել ծառացած տնտեսական, հրատարակչական եւ տպագրական խնդիրները»:

Վերջին միտքը գուցե ընդունելի է մանկական մամուլի համար՝ ելնելով դրանց տրամադրվող գումարների չափից, սակայն մարզերում տպագրվող թերթերի համար այն միանգամայն չափազանցված է: Յուրաքանչյուր մարզում սուբսիդավորվում է մինչեւ 5-6 անուն մամուլ, որոնց հատկացված գումարային չափից ելնելով՝ տարեկան 300-500 հազար դրամ, կարող ենք ասել, որ դա չի արվում բնակչությանը տեղեկատվությունը մատչելի դարձնելու նպատակով եւ հատկապես տնտեսական, հրատարակչական եւ տպագրական խնդիրները լուծելու համար, ինչպես վերնագրված է փաստաթուղթը: Այդ թերթերի հիմնական մասը դերակատարություն չունի հասարակական կյանքում, եղանակ չի ստեղծում, սպառող չունի, խմբագրություն եւ խմբագրակազմ չունի, եւ վաղուց է բնակչությունը մոռացել դրանց գոյության մասին: Այս ոլորտում մեր իրականացրած ուսումնասիրությունը պարզեց, որ կառավարության օժանդակության ցանկում ընդգրկված շատ լրատվամիջոցներ մարդ-խմբագրություններ են՝ մեկհոգանոց «աշխատակազմով»: Խմբագիրը նաեւ լրագրող է, սրբագրիչ, տնտեսվար, համակարգչային օպերատոր, առաքիչ:

Լրագրողների «Ասպարեզ» ակումբի նախագահ **Լեւոն Բարսեղյանի** կարծիքով՝ աջակցության ընդունելի միակ ձեւը հարկային արտոնությունը կարող է լինել. որեւէ ուղղությամբ, հարկային վերադարձը կամ փոխհատուցումը, ինչպես օրինակ՝ «պետությունից թերթերին հատկացվող գումարի չափով համամասնորեն հարկերի զիջումը թերթերին»:

ՁԼՄ փորձագետ Մեսրոպ Հարությունյանը նշում է, որ ճիշտ կլինի «սուբսիդավորումը կախման մեջ դնել տվյալ թերթի՝ նախորդ տարի վճարած հարկերից: Այսինքն՝ ըստ էության նրա վճարած հարկերը վերադարձնել իրեն, ինչը խթան կլինի, որ լրատվամիջոցը ե՛ւ վաճառքը ավելացնի, ե՛ւ գովազդային մուտքերը, այսինքն՝ ինչքան լավ աշխատես ու եկամուտ ապահովես, այնքան շատ հարկեր կվճարես, հետեւաբար հաջորդ տարի շատ ֆինանսավորում կստանաս»:

Ծրագրի իրականացման ընթացքում ուսումնասիրվեց մարզերում հրատարակվող թերթերի գերակշիռ մասը, եւ պարզվեց, որ մարզային հիմնախնդիրները տեղ չունեն թերթերի էջերում: Չնայած յուրաքանչյուր մարզում մինչեւ հինգ անուն թերթ է հրատարակվում, սակայն հաճախակի են մարզպետները խոստովանում, որ մարզային բազմաթիվ խնդիրների մասին հանրապետական մամուլից են տեղեկացել: Այսինքն՝ մարզային մամուլը մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով շեղվել է իր բուն նպատակից եւ մամուլի արագ վերափոխման մեր ժամանակներում մնացել է նախորդ հասարակարգում՝ իր հետաքրքրություններով, թեմատիկայի ընտրությամբ, տեխնիկական հնարավորություններով եւ այլն:

Այս առումով ծրագրի շրջանակներում կազմակերպված թիրախային խմբերի քննարկումների մասնակիցների մի մասի կարծիքով՝ «համայնքային թերթերը հրատարակվում են ամիսը մեկ անգամ եւ ժամանակավրեպ են», մյուսները նշում են, որ յուրաքանչյուր մարզի բնակիչ ուզում է տեղեկանալ իր մարզի լուրերին, նրան ավելի շատ հետաքրքրում է, թե ինչ է կատարվում իր մարզում:

Խոսելով մարզային մամուլի բովանդակային սահմանափակումների եւ ընթերցողների թվի կրճատման մասին, մասնակիցների խոսքով՝ տպագիր մամուլի ազդեցության նվազումը պայմանավորված է էլեկտրոնային լրատվամիջոցների հաղթարշավով: Ոմանց կարծիքով՝ չնայած, որ մարդիկ ավելի հաճախ տեղեկատվություն ստանում են համացանցի միջոցով, այնուամենայնիվ, նախընտրում են վերլուծական նյութերը կարդալ տպագիր մամուլում:

Մարզային թերթերի խմբագիրների տեղեկացմամբ՝ սուբսիդիան թերթերի կայացման սկզբնական շրջանում մեծապես նպաստել է ֆինանսական դժվարությունների հաղթահարմանը: Հետագայում հատկացված գումարն ամեն տարի կրճատվել է սուբսիդավորման ցանկը նոր անուններով համալրվելու պատճառով: Ցանկում ընդգրկվել են մասնագիտական շատ նեղ շրջանակի ուղղված ամսագրեր, որոնց հրատարակիչը կամ հիմնադիրը ՀԿ-ներն են կամ պետական կառույցները, մարզական կազմակերպությունները, ստեղծագործական եւ հայրենակցական միությունները («ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն» ՀԿ», «Օրենք եւ իրականություն» ՍՊԸ, «Գարդմանահայերի հայրենակցական միավորում» ՀԿ, «Համշեն» հայրենակցական-բարեգործական» ՀԿ, «Զորավիգ-Մերհով» ՍՊԸ եւ այլն): Անվանացանկում կրկնվում են գրական-մշակութային նույնաբնույթ թերթերը, ամսագրերն ու հանդեսները: «Նովոյե վրեմյա» եւ «Գոլոս Արմենիի» թերթերը նորովի են ներկայացված ընթերցողին, նրանք ֆինանսավորվում են ոչ թե որպես ռուսալեզու թերթեր, այլ՝ ազգային փոքրամասնության:

Ցուցակն ընդլայնվել է, սակայն ոչ պետական մամուլին հատկացվող գումարը չի ավելացել, եղածը կիսվել է ցանկը համալրածների միջեւ: Հայաստանի կառավարությունն այս քաղաքականությամբ միայն կարող է ընդգծել, որ պետությունը մոռացության չի մատնել մամուլը, բայց ֆինանսական աջակցություն համարելը դժվար է: Հատկացվող գումարի չափերը եթե նկատի ունենանք, դա ավելի շատ բարոյական աջակցություն է, քան ֆինանսական:

«500 հազար դրամով, որը տրվում է մեր թերթին,- ասում է «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր **Սամվել Ալեքսանյանը**, չենք կարող որեւէ կոնկրետ հարց լուծել: Երկու տպագրական մամուլ ծավալով թերթ տպագրելու դեպքում կհերիքի (լրագրային թուղթ, սեւ-սպիտակ տպագրություն) յոթ համարի տպարանային ծախսը հոգալուն (2000 տպաքանակի պարագայում)»: Նրա կարծիքով՝ մարզային թերթը պետք է կարողանա սեփական նյութերով ու պարբերաբար լուսաբանել տվյալ տարածաշրջանի առօրյան, ինչը մեծ ջանք է պահանջում, ինչպես նաեւ հաշվի չի առնվում դրամի արժեզրկումը եւ տպագրական ու մյուս ծախսերի աննկատ, բայց եւ հետեւողական բարձրացումը»:

Նոր ժամանակները նոր մարտահրավեր են նետել տպագիր մամուլին, այսօր մամուլի աջակցության պետական քաղաքականությունն այլեւս չի կարող մնալ ԱԱՀ-ն փոխհատուցելու շրջանակում: Փոխատեղումներ են տեղի ունեցել լրատվամիջոցների միջավայրում, նախկին ամենաազդեցիկ թերթերն իրենց տեղը զիջել են նորերին, կրճատվել է հանրապետական թերթերի տպաքանակը՝ երբեմն հավասարվելով մարզային թերթերին: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մեր դարաշրջանում, երբ «թղթի» հոտն արդեն ընթերցողին չի գրավում, եւ տպագիր մամուլի տպաքանակը կրճատվում է ամբողջ աշխարհում, ՀՀ կառավարության որդեգրած 15 տարվա վաղեմության աջակցութան քաղաքականությունն այլեւս արդիական չի կարող համարվել:

Պետության աջակցության ձեւական քաղաքականությունը վաղուց ոչինչ չի տալիս այն ստացողներին, չնայած սուբսիդիայից օգտվող լրատվամիջոցների ղեկավարներից ոմանք, փոքրիկ աջակցությունը կորցնելու մտավախությունից՝ հավաստիացնում են, որ այդ գումարով են հրատարակում թերթը: Ի՞նչ խնդիր կարող են լուծել մեկ տպագրական մամուլով տարեկան մի քանի համար հրատարակվող թերթերը կամ տարեկան 3-4 համար հրատարակվող ամսագրերը, ո՞րն է նրանց դերակատարությունը հասարակական-քաղաքական կյանքում կամ համայնքի ներսում:

Կառավարությունն իր որդեգրած աջակցության քաղաքականությամբ արժեզրկել է մամուլը: Դա նպաստել է, որ սուբսիդավորվող լրատվամիջոցները բավարարվեն գոյատեւելու քաղաքականությամբ՝ պահպանել են անունը եւ չեն մտահոգվել լրատվամիջոցի կայացումով: Պատահական չէ, որ ավանդական լրատվությունն ու նոր տեխնոլոգիաները պետական աջակցությամբ հրատարակվող լրատվամիջոցների դեպքում չեն համատեղվել: Մարզային թերթերից մեկ-երկուսն ունեն էլեկտրոնային կայքեր, երբ տարածման այս ձեւը վաղուց արդիական է դարձել:

Սուբսիդավորման գործող կարգը խթան չէ մամուլի համար, որպեսզի բարելավի իր գործունեությունը, մրցակցի թեկուզ մարզային մակարդակով, զարգացման հեռանկարներ ունենա՝ ապահովելով որոշակի տպաքանակ, որը նաեւ թերթին ֆինանսական մուտքեր կապահովի: Տեղական ինքնակառավարման մարմինների հայտարարությունների հրատարակումն այդ դեպքում «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մենաշնորհը չէր դառնա եւ ֆինանսական մուտքեր կապահովեր առաջին հերթին տեղական թերթերի համար:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը, ինչպես նաեւ տպագիր մամուլի զարգացումը խթանելու նպատակով կառավարության որդեգրած քաղաքականության վերաբերյալ լրատվամիջոցների ղեկավարների ու մամուլի փորձագետների շրջանում իրականացված հարցման արդյունքները՝ ՀՀ մշակույթի նախարարի քննարկմանն ենք ներկայացնում հետեւյալ առաջարկները.

1. ՀՀ մշակույթի նախարարին կից պետական աջակցությամբ հրատարակվող ոչ պետական մամուլի անվանումների ցանկը ձեւավորող խորհրդում պետք է գերակշռեն լրատվական գործունեությանը խիստ իրազեկ անձինք,
2. «Աջակցություն ոչ պետական մամուլին» պետական բյուջեից հատկացվող դրամական օժանդակությունը հատկացնել մրցութային կարգով, ներկայացված հայտ-նախագծերի հիման վրա,
3. տեխնիկական պահանջներից բացի կարեւորել լուսաբանվող թեմաները, ազգային փոքրամասնությունների դեպքում՝ ազգային լեզվով հրապարակումները պետք է կազմեն 80%-ը,
4. ավելացնել սուբսիդիայի չափը՝ լրատվամիջոցին լիարժեք գործունեություն ծավալելու հնարավորություն տալով, կամ՝ հարկային արտոնություններ սահմանել տպագիր լրատվամիջոցների համար. դրամական աջակցության փոխարեն հարկերի համամասնորեն վերադարձի քաղաքականություն կիրառել: Այսինքն՝ թերթերին զիջել հարկերը՝ պետությունից հատկացվող գումարի չափին համամասնորեն,
5. հավասար մրցակցային դաշտ ապահովել բոլորի համար՝ վերացնելով պետական եւ ոչ պետական մամուլի միջեւ եղած անհավասար իրավիճակը,
6. մշակել պետական ֆինանսական աջակցության տրամադրման չափորոշիչների համակարգ՝ տպաքանակից եւ հրատարակման թվաքանակից բացի պարտադիր համարել խմբագրական գործունեություն ծավալելու համար նվազագույն պահանջները՝ խմբագրակազմ, գործունեության տարածք, տեխնիկա, 3 տարուց ոչ պակաս գործունեություն, հանրային կարծիքի ձեւավորման վրա ունեցած ազդեցությունը, զարգացման ռազմավարությունը, մասնագիտական որակի ապահովում եւ այլն,
7. Ազգային փոքրամասնությունների հրատարակությունների համար գումար տրամադրել, եթե տվյալ փոքրամասնությունը երկրի բնակչության թվի 0,5%-ն է կազմում,
8. Իրականացնել աուդիտ՝ տրամադրվող ֆինանսական միջոցների նպատակային ծախսումները վերահսկելու համար:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հետք»

# Մեքսիկայում մոլորված «Հեյդար Ալիեւը»

Հայերս առաջին հայացքից տարօրինակ շատ ասացվածքներն ունենք, բայց ավելի հաճախ դրանք, թեկուզ դառը, բայց իրականություն են: Օրինակ՝ ասում ենք, թե «փողը մութ տեղը լույս կտա»: Սա բավականին խոսուն է, երբ վերաբերում է հատկապես ադրբեջանական ակտիվ գործունեությանը՝ այսուայնտեղ սեփական «հարցերը» լուծելու համատեքստում:

Մեքսիկայում շարունակվում են բուռն քննարկումները մայրաքաղաքի կենտրոնական երկու զբոսայգիներում Հեյդար Ալիեւի արձանի եւ Խոջալուի «ցեղասպանության» հուշակոթողի վերաբերյալ: Ու չնայած նախկին քաղաքապետի ստեղծած հանձնաժողովի՝ ադրբեջանական արձանները հեռացնելուն ուղղված դրական որոշմանը, Մեքսիկայի նախորդ վարչակազմը եւ քաղաքապետը թողեցին իրենց պաշտոնները առանց գործնականում լուծում տալու հուշարձանների խնդրին:

Բնականաբար, երբ հայտնվել էր Մեքսիկայի մայրաքաղաքի նոր քաղաքապետը, ադրբեջանական կողմը գործի էր անցել՝ փորձելով ճնշմամբ հասնել արձանները հեռացնելու մասին արդեն իսկ ընդունված որոշումը չկատարելուն: Մասնավորապես, Մեքսիկայում Ադրբեջանի դեսպանը դատական հայց էր ներկայացրել Մեխիկոյի քաղաքապետարանի դեմ, դատական գործընթացում պարտվելուց հետո սպառնացել էր խզել դիվանագիտական կապերը Մեքսիկայի հետ, փակել դեսպանությունը եւ դիմել միջազգային դատարան:

Ադրբեջանի դեսպանի այսօրինակ գործողություններին անդրադարձել է Մեխիկոյի քաղաքապետարանի հատուկ հանձնաժողովի երեք անդամներից մեկը՝ Գաբրիել Գուեռան, որը նշել է, որ ադրբեջանական կողմի նման պահվածքը կարող է վերջնականապես փչացնել ադրբեջանա-մեքսիկական հարաբերությունները, իսկ դեսպանը բռնել է Մեքսիկայում անցանկալի անձ (persona non-grata) հայտարարվելու ճանապարհը:

Մեքսիկական մի շարք լրատվամիջոցներ դեկտեմբեր-հունվար ամիսներին հերթական ծավալուն անդրադարձները կատարեցին հուշահամալիրների խնդրին: Հունվարի 20-ին Հեյդար Ալիեւի արձանի դիմաց մարդու իրավունքների հարցերով մեքսիկացի հիսունից ավելի ակտիվիստներ՝ մարդու իրավունքների հանրահայտ պաշտպաններ Դանիել Գերշենսոնի եւ Հոմերո Արիդյիսի գլխավորությամբ բողոքի ցույց կազմակերպեցին ընդդեմ Խոջալուի հուշահամալիրի եւ Ալիեւի արձանի:

Վերջին զարգացումների համատեքստում հունվարի 22-ին պաշտոնական հայտարարությամբ հանդես է եկել նաեւ Մեխիկոյի քաղաքապետարանը, համաձայն որի վերջնական որոշում է կայացվել Հեյդար Ալիեւի արձանը հանելու քաղաքի կենտրոնական Paseo de la Reforma զբոսայգուց եւ տեղափոխելու որեւէ մասնավոր տարածք: Քաղաքապետ Միգել Անխել Մանսերան հայտարարել է, որ ստալինյան ոճի Հեյդար Ալիեւի արձանը տեղափոխվելու է այլ վայր:

Քաղաքապետարանը հայտարարել է նաեւ, որ որոշվել է փոխել Մեխիկոյի մեկ այլ՝ Tlaxcoaque կոչվող հրապարակում տեղակայված «Խոջալուի» հուշահամալիրի ցուցանակի եւ բուն հուշահամալիրի վրա գրված տեքստը՝ այնտեղից հանելով ցեղասպանություն բառը:

**Վ.ՊՈՂՈՍՅԱՆ**

# «Իսլամական պարեկները» ահաբեկում են լոնդոնցիներին

**Լոնդոնի փողոցներում հայտնվել են «իսլամական պարեկներ», որոնք արդեն հարուցել են հասարակայնության զայրույթը եւ զգոնության դրդել ոստիկաններին: Մութ փողոցներով շրջող սեւազգեստ երիտասարդները, որոնք գլխանոցներով թաքցնում են իրենց դեմքը, հալածում են անցորդներին, լկտիորեն եւ կոպտորեն հասկացնելով, որ հարկավոր է ավելի համեստ հագնվել, ալկոհոլ չօգտագործել, լինել «աստվածավախ» եւ առհասարակ մեկընդմիշտ հեռանալ «մահմեդական տարածքից». նրանք այդպես են անվանում Լոնդոնի արեւելյան շրջանները, որտեղ հատկապես մեծ թիվ են կազմում մահմեդականները:**

**Նրանք իրենց «պարեկությունը» նկարահանում են հեռախոսների տեսախցիկներով եւ տեղադրում YouTube-ում: Տասնյակհազարավոր դիտումներ արձանագրած այդ դրվագները պատմում են այդ խմբերի «սխրանքների» մասին եւ այնքան հայտնի են դարձել, որ դրանցով սկսել է զբաղվել Մեծ Բրիտանիայի ոստիկանությունը: «Գարդիան» թերթը հաղորդում է, որ Լոնդոնի արեւելյան մասում հասարակական կարգը խախտելու կասկածանքով արդեն ձերբակալվել են երկու անձինք: Առաջինին, որը 22 տարեկան է, բռնել են հանցանքի վայրում: Երկրորդը՝ 19-ամյա մի երիտասարդ, ինքն է ներկայացել ոստիկանական տեղամաս:**

**Հունվարի կեսերից շարիաթի կողմնակիցները հրապարակել են առնվազն 3 տեսագրություն: Դրանցից դատելով, ամեն ինչ սկսվել է H&M խանութների ցանցի գովազդային պաստառների փչացումից եւ հրկիզումից: Խոսքը կրծկալների գովազդերի մասին է: Տեսագրությունների անտեսանելի մեկնաբաններից մեկն ասում է, որ մահմեդականները ստանձնել են «բարու կառավարումը եւ չարի արտաքսումը» եւ պարտավոր են «ծածկել այդ մերկ մարդկանց»:**

**Շուտով «պարեկները» սկսեցին զբաղվել անմիջական «դաստիարակությամբ»: «Ճշմարտություն շաբաթօրյա հարբեցողության մասին» անունը կրող հաջորդ տեսագրության մեջ ցուցադրված են մի շարք համանման տեսարաններ: Օրինակ, խումբը մոտենում է անցորդին եւ պահանջում, որ նա անմիջապես դեն նետի գարեջրի շիշը, իսկ նա սարսափելով անառարկելիորեն կատարում է պահանջը: Երիտասարդ ստահակները նրան հայտարարում են, որ դա «մահմեդական շրջան» է, որտեղ ալկոհոլը համարվում է «արգելված դեւ»:**

**Պարեկները փողոցով անցնող սպիտակամորթ կանանց անվանում են «ինքնահարգանքից զուրկ մերկ կենդանիներ» եւ պահանջում են, որ նրանք ծածկեն իրենց մարմինները եւ հրաժարվեն կարճ շրջազգեստներից:**

**Ոստիկանությունը ենթադրում է, որ «իսլամական պարեկները» կապված են «Իսլամ Բրիտանիայի համար» արմատական կազմակերպության հետ, որը հայտարարված է օրենքից դուրս եւ որի անդամները ենթակա են մինչեւ 10 տարվա բանտարկության:**

**Լոնդոնի մահմեդական համայնքի առաջնորդները դատապարտել են «պարեկներին». իմամները այդ մասին հայտարարել են մզկիթներում: Համայնքի անդամները ջանում են հնարավորինս սահմանազատվել բարքերի ինքնակոչ պահապաններից: Մեծ Բրիտանիայի մահմեդական համայնքը մոտ 2,5 մլն անդամ ունի: Մոսկովյան «Ռոսիյսկայա գազետա» թերթը նշում է, որ բրիտանական հասարակությունը բազմազգ եւ բազմամշակութային դարձնելու գաղափարը հռչակվել էր լեյբորիստների առաջնորդ Թոնի Բլերի վարչապետության տարիներին:**

**Երբ 2005 թվականին Ֆրանսիայում ներգաղթյալների արվարձաններում զանգվածային անկարգություններ սկսվեցին, բրիտանացի մեկնաբանները միահամուռ հավաստիացնում էին, թե իրենց երկրում դա անհնար է, քանի որ, ի տարբերություն Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայում եկվորները «իսկապես ինտեգրվել են բրիտանական հասարակությանը»: Բայց ներկայումս Մեծ Բրիտանիայում շատերը կարծում են, որ իրենց երկիրը սկսել է չափից ավելի սիրաշահել մահմեդական համայնքին: Որոշ դեպքերում բանը հասնում է անհեթեթության. մինչ տեղական մզկիթներում «անհավատներին» դատապարտող ելույթներով հանդես են գալիս իսլամիստ արմատականները, նրանց խոսքի ազատությունը պաշտպանում են բրիտանական ոստիկանության ջոկատները:**

**Վերջում թերթը մեջբերում է ժողովրդագրական հետեւյալ կանխատեսումները. 20 տարի հետո Մեծ Բրիտանիայում ապրող մահմեդականների թիվը կրկնապատկվելով կհասնի 5,5 մլն-ի: Մոտավորապես նույնպիսի երեւույթ տեղի կունենա ամբողջ Եվրոպայում:**

**Պ. Ք.**

# Սարկոզին ուզում է հեռանալ Ֆրանսիայից

Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին մտադրվել է երկրից հեռանալ նոր իշխանությունների սահմանած 75 տոկոսի «հարուստների հարկից» խուսափելու համար: Սակայն, ի տարբերություն Ժերար Դեպարդյոյի, նա ուզում է կայունություն եւ բարեկեցություն գտնել Մեծ Բրիտանիայում: Այդ մասին հաղորդում է «Դեյլի մեյլ» թերթը:

2012-ի հունիսին նախագահական պաշտոնից զրկված Սարկոզին մտադիր է իր կապիտալները տեղափոխել Լոնդոն, որտեղ հարկման տոկոսներն ավելի ցածր են, քան Ֆրանսիայում: Բրիտանական ԶԼՄ-ների տվյալներով, նախագահական նստավայրում ոստիկանության հայտնաբերած փաստաթղթերը վկայում են, որ արդեն ամռանը նա մտադրվել էր փախչել Ֆրանսիայից:

Սարկոզին հայրենիքում քննության տակ է կաշառակերության, ինչպես նաեւ L´Ore´al ընկերության ղեկավար Լիլյան Բետանկուրից անօրինական հովանավորչական օգնություն ստանալու ամբաստանությամբ: Տվյալ հանգամանքը բարդացնում է Սարկոզիի տարագրման փորձերը: Նա ուզում է կնոջ՝ Կառլա Բրունիի հետ տեղափոխվել Լոնդոնի Հարավային Քենսինգտոն շրջան, որտեղ արդեն բնակարան է ընտրել: Սակայն տեղափոխությունը հնարավոր կդառնա միայն քննության ավարտից հետո:

# Մալիում Պենտագոնն օգնության հասավ ֆրանսիացիներին



**Ամերիկյան ռազմափոխադրական օդանավերը սկսել են ֆրանսիացի զինծառայողներին տեղափոխել Մալիի մայրաքաղաք Բամակո: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**C-17 օդանավերը մասնավորապես թռիչքներ են իրականացնում Ֆրանսիայի հարավում գտնվող Իստրի ավիաբազայից: Ամերիկյան բանակի աֆրիկյան հրամանատարության ներկայացուցիչ Բենջամին Բենսոնի խոսքերով՝ օդանավերը տեղափոխում են զինվորների, սպաների, ինչպես նաեւ ռազմական սարքավորումներ:**

**Ավելի վաղ ֆրանսիացիներին սկսել էին օգնել ՆԱՏՕ-ի մի շարք ուրիշ երկրներ, մասնավորապես Մեծ Բրիտանիան, Կանադան, Բելգիան եւ Դանիան: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքի տվյալներով, Ռուսաստանը եւս օգնություն է առաջարկել ֆրանսիական զորքի ու ռազմահանդերձանքի տեղափոխման գործում:**

**Մալիում ֆրանսիական զորքի գործողությանը ԱՄՆ-ի մասնակցությունը մեկնաբանելիս Բենսոնն ասել է, որ Փարիզը Վաշինգտոնից աջակցություն է ստանում նաեւ հետախուզական տվյալների ոլորտում: Նա չի մանրամասնել, թե տարածաշրջանում հետախուզական տվյալների հայթայթմանը մասնակցո՞ւմ են արդյոք ամերիկյան անօդաչու ինքնաթիռներ:**

# Բրիտանացի արտգործնախարարը մեղադրում է Իսրայելին

## *Նաթանյահուն վերընտրվել է վարչապետի պաշտոնում*



Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը Իսրայելի ղեկավարությանը մեղադրել է մերձավորարեւելյան հաշտության բանակցությունների ձախողման համար: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Հեյգի այն խոսքերը, որ Այսրհորդանանում հրեական ավանների կառուցման շարունակումը ոչ միայն ի չիք է դարձնում Իսրայելին ուղղված միջազգային աջակցությունը, այլեւ բացառիկ աղետալի հետեւանքներ է ունենում հակամարտության կարգավորման համար: Նախարարը պարզաբանել է, որ ավանների կառուցումն ու ընդլայնումը ավելի ու ավելի մշուշապատ են դարձնում միջազգայնորեն ճանաչված «երկու պետություն երկու ժողովրդի համար» գաղափարի հեռանկարը:

Հեյգը ընդգծել է, որ 2013 թվականը վճռական տարի է պաղեստինա-իսրայելական կարգավորման համար, քանի որ Իսրայելում հունվարի 22-ին անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, իսկ ԱՄՆ-ում նախագահ է վերընտրվել Բարաք Օբաման: «Եթե մենք այս տարի չկարողանանք առաջ շարժվել, Իսրայելի սահմանազատումը դարձել է անհնար», եզրակացրել է բրիտանացի արտգործնախարարը:

Ինչ վերաբերում է Իսրայելում հունվարի 22-ին անցկացված խորհրդարանական ընտրություններին, վարչապետի պաշտոնը երրորդ անգամ կզբաղեցնի Բենիամին Նաթանյահուն, քանի որ «Լիկուդ Բեյթեյնու» դաշինքը ստացել է քվեների 23,24 տոկոսը եւ խորհրդարանում կունենա 31 տեղ: «Եմ Աթիդ» կենտրոնամետ կուսակցությունը ստացել է քվեների 14,19 տոկոսը եւ խորհրդարանում կունենա 19 տեղ: «Ավոդան» ստացել է 11,45 տոկոս եւ կունենա 15 տեղ: «Լիկուդի» առաջնորդ Բենիամին Նաթանյահուն պաղեստինցիների նկատմամբ կոշտ գծի կողմնակից է, սակայն պաշտոնապես չի մերժում ինքնուրույն պետություն ունենալու նրանց իրավունքը:

Նաթանյահուն եւ «Եմ Աթիդի» երիտասարդ առաջնորդ Յաիր Լապիդը մտադիր են կազմել լայն կոալիցիա: Վարչապետ Նաթանյահուն արդեն հռչակել է այն 5 սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվի երկրի ապագա կառավարությունը: Նրա խոսքերով, կառավարության քաղաքական սկզբունքները պետք է լինեն պաշտպանունակության ամրապնդումը, տնտեսական պատասխանատվությունը, պետական պատասխանատվությունը, հավասար իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ գների իջեցումը, այդ թվում՝ բնակարանների:

**Պ. Ք.**

# Վլադիմիր Աբաջյանի պայծառ հիշատակին

Մի պայծառ աստղ էլ թռավ մեր թատերական աշխարհի երկնակամարից... Վլադիմիր Աբաջյանն էր, որ թռավ իր ժամանակակիցների, կուրսակիցների, մտերիմների ու հարազատների անվերադարձ հավաքատեղին: Մեր ծանոթությունն ու մտերմությունն սկսվել էր 1947-ի օգոստոսից, երբ ընդունելության քննություններ էինք հանձնում Թատերական ինստիտուտ ընդունվելու համար: Դեռ այն օրերից Աբաջյանը մի քիչ միամիտ, բայց խելացի, խորապես ռոմանտիկ հոգու տեր երիտասարդ, տատանվում էր՝ թատերագիտական ֆակուլտետ ընդունվի, թե՞ դերասանական: Դպրոցում զբաղվել էր արտասանությամբ («Գիքոր» եւ այլն), ուներ հուժկու դրամատիկ ձայն, որ մինչեւ վերջ էլ մնաց նրա մենաշնորհը, որը եւ վճռեց ընտրության հարցը:

Վլադիմիր Համբարձումի Աբաջյանը ծնվել է 1927 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Դուզքենդի շրջանի Ղոնախղռան (այժմ՝ Շիրակի մարզի Շիրակ) գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել էր Լենինականում (այժմ՝ Գյումրի), իսկ բարձրագույն մասնագիտականը՝ Երեւանի Թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետում, Արմեն Գուլակյանի կուրսում (1947-1951 թթ.): Գուլակյանի պես հմուտ, միաժամանակ խիստ ու պահանջկոտ ռեժիսորի ձեռքի տակ Աբաջյանն սկսեց բացվել, ազատվել ավելորդ լարվածությունից ու դարձավ ակնառու դերասան: Դրա շնորհիվ էր, որ դեռ ուսանող Աբաջյանին Գուլակյանը տարել էր Սունդուկյանի անվան թատրոն, մասնակից դարձրել Պոպովի «Ընտանիք» պիեսի բեմադրության փորձերին Գեւորգ Աշուղյանի հետ պատանի Ուլյանովի դերը խաղալու համար:



Ինստիտուտում Գուլակյանը երեք պիես էր բեմադրել՝ Սունդուկյանի «Քանդած օջախ», Աֆինոգենովի «Մաշենկա», Շեքսպիրի «Վերոնայի երկու ազնվականները» պիեսները, որոնցում Աբաջյանը կատարում էր Օսեփի եւ Օկայոմովի դրամատիկ եւ Պրոտեուսի-սիրահարի՝ մեկը մյուսից խիստ տարբեր դերերը: Նրա նախասիրությունը դրամատիկ, մարդկային հարուստ հոգեբանության տեր կերպարների մարմնավորումն էր:

Որոշ առարկաներ մեր՝ թատերագիտական կուրսը դերասանականի հետ էինք անցնում եւ գրեթե կուրսակից էինք: Երրորդ կուրսում ես նույնիսկ զեկուցում էի պատրաստել «Քանդած օջախի» եւ մեզ զուգահեռ երկրորդ դերասանական կուրսի «Պատվի համարի» մասին, բարձր գնահատելով հատկապես Գուլակյանի բեմադրության դերակատարներին:

Ուսման դասընթացն ավարտելուց հետո Գուլակյանն իր կուրսի լավագույն ուժերին՝ Խորեն Աբրահամյանին, Արմեն Խոստիկյանին, Վլադիմիր Աբաջյանին եւ Նինել Դալլաքյանին տարավ Սունդուկյանի անվան թատրոն, որտեղ նրանք գերազանցորեն արդարացրին իրենց հետ կապված հույսերը՝ բոլորն էլ դարձան ժողովրդական արտիստներ թե՛ կոչումով եւ թե՛ ճանաչողությամբ:

Ինչպես կյանքում, այնպես էլ թատրոնում, Աբաջյանն իր շրջապատի դերասանների մեջ ամենառոմանտիկն էր, պարզ, մարդամոտ, անկեղծ բնավորության տեր անձնավորություն: Նրա այդ ռոմանտիզմն առավել ցայտուն դրսեւորվեց մի շարք բեմական կերպարներում, ոչ պակաս ռոմանտիկ դերասանուհիներ Մետաքսյա Սիմոնյանի եւ Մարգո Մուրադյանի Սուսանների հետ մարմնավորեց Սեյրանի («Նամուս») դերը Վարդան Աճեմյանի ամենափայլուն բեմադրություններից մեկում: Այնուհետեւ հանդես եկավ Արամանյակի («Արա Գեղեցիկ»), Գնելի («Ավերված քաղաքի առասպելը»), Ալեքսանդր («Ժայռ»), Բենվոլիոյի («Ռոմեո եւ Ջուլիետ»), Բանաստեղծի («Մհերի դուռը»), Միքայել Աբելյանի («Խաչմերուկ»), Նեզնամովի («Անմեղ մեղավորներ»), Օսեփի («Քանդած օջախ»), Սինիցիոս Վելուտոսի («Կորիոլան») եւ շատ այլ դերերում: Աբաջյանը խաղացել է նաեւ մի շարք ռադիոբեմադրություններում, շատ քիչ՝ կինոյում: Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերի ժամանակ եղել է Վրաստանի, Ադրբեջանի, Սիրիայի, Լիբանանի, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի մի շարք քաղաքներում, հանդես եկել նաեւ ասմունքով:

Հաճախ չէ, որ Վլադիմիր Աբաջյանին նոր դերեր են տրվել: Բեմի կարոտը նրան նորից մղել է դեպի էստրադա՝ ասմունքի: Դա նրա ստեղծագործական կյանքի երկրորդ, ոչ պակաս ուշադրության արժանի աշխարհն էր: Նա մեկն է իր սերնդակիցների եւ հետեւորդների շրջանում, որ իր ահռելի հիշողությամբ հանդիսատեսին էր հասցնում հայ դասական պոեզիան Նարեկացուց մինչեւ մեր օրերը՝ Քուչակին, Սայաթ-Նովային, Թումանյանին, Տերյանին, Չարենցին, Շիրազին, Սահյանին, Սեւակին եւ էլի ուրիշների: Եվ ի՜նչ հիշողություններ ուներ Շիրազի, Սահյանի, Սեւակի եւ ուրիշների հետ հանդիպումներից, որոնց ժամանակ նուրբ հումորով պատմում էր դեպքեր նրանց կյանքից (հիշենք թեկուզ Շիրազի կանաչ փողկապի պատմությունը Հայաստանի գրողների տանը տեղի ունեցած հանդիպման ժամանակ):

Աբաջյանը Սուրեն Քոչարյանի դպրոցի ասմունքող էր եւ ոչ թե արտասանող: Նա աշխատում էր իր ներկայացրած գործերը դինամիկ եւ պատկերավոր դարձնել եւ դա նրան հաջողվում էր: Նա գիտեր ո՞ր բառը հատու շեշտով ընդգծել, ո՞րը՝ հարցականով ներկայացնել. շեշտե՞լ ասելիքի իմաստը, դիմախաղով արտահայտել զավեշտականն ու զայրույթը, ձեռքի թեթեւ թափահարումով բանի տեղ չդնել անկարեւորը: Ո՞վ կարող է մոռանալ նրա ներկայացրած Խմբապետ Շավարշը, որին նա այնպես է ներկայացնում-նկարագրում, ասես այդ րոպեին դու տեսնում ես նրան, իբրեւ կենդանի անձնավորություն աչքիդ առաջ:

Վլադիմիր Աբաջյանը բացի թեմատիկ կամ խմբական ելույթներից ունեցել է նաեւ անհատական ելույթներ, որտեղ ներկայացրել է անցյալի եւ ժամանակակից հեղինակների գործերը: Եթե հրաշքով Հյուսիսային կամ Հարավային բեւեռներում հայկական դպրոց լիներ ու հայ գրականության դասագիրք չունենային, Աբաջյանին հրավիրեին, նա կարող էր մի ամբողջ դասագիրք հուշել նրանց:

Վլադիմիր Աբաջյանը եղել է սփյուռքահայ բազմաթիվ համայնքներում եւ ամենուրեք մեծ հաջողություն է ունեցել ոչ միայն կատարողական արվեստով, այլեւ հայ գրականության ընտրանին հանդիսատեսին հասցնելով ու գնահատվել ինչպես հարկն է:

**ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**
**Երեւան**

# Բեյրութի «Կամար» հանդեսի թիվ 16-ը

**Բեյրութում լույս տեսնող «Կամար» գրական-գեղարվեստական պարբերաթերթը 2012-ի հերթական համարն է ներկայացնում ընթերցողական լսարանին: «Կամարը» շարունակում է ապահովել տպագրության բարձր որակը՝ գեղարվեստական ձեւավորման իր ուրույն մոտեցումով, յուրաքանչյուր նյութին համապատասխանորեն նկարչական գործի որեւէ իլյուստրացիայով: Այս համարի գեղանկարչական ներկայությունը նույնպես բազմազան ու գրավիչ է: Պարբերաթերթի հրատարակությունը շարունակվում է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության օժանդակությամբ, տնօրեն Մարտին Եսայանի հովանավորությամբ:**

**Ինչպես միշտ, այս համարի էջերի զգալի հատվածը տրամադրված է գեղարվեստական գրականությանը՝ հայ, նաեւ միջազգային գրողների մի շարք գործերին. չափածո ստեղծագործությունները հիմնականում սփյուռքի մեր բանաստեղծների գրչին են պատկանում՝ Խաչիկ Տետեյան, Հարություն Նազույան, Ավիկ Դերենց, նաեւ Հրանտ Ալեքսանյան, Գառնիկ Գալստյան:**

**Բանաստեղծական զգայական պատկերների թափանցիկությամբ, անցյալի հիշողությունների եւ բանաստեղծի հայացքի ներկա իրատեսության քարտեզներին՝ մարդկային քաղաքակրթության տագնապները ավելի խորը արմատների առիթ են տալիս, եւ Հայաստանն ու հայությունը հոգու խաղաղության անկյուն են դառնում: Հոգեվիճակներն ու գաղտնի ներաշխարհները ծնվում են զգացումների «բաց տափաստաններից»: Հարություն Նազույանի «Այս իմ տունն է» խորագրով չափածո գործը հոգու վավերագրություն է անցյալի ու այսօրվա, որտեղ զգացմունքներն աղոթքի են նմանվում, որովհետեւ արմատ է իր երկրի վանքերի սրբություններով, տագնապում մոլորակի մարդկության հավանական ու անհավանական ցնորքներից ու ցանկություններից: /Շատ շատ երեւոյթներ քաղաքակրթութեան/ Ճամբուն վրայ չեն/ Լուսանցքէն դուրս են/ Երեւոյթներն ու գաղափարները/ Շատ վախնալիք են/ Այս իմ տունն է/ Կը վերածուի պալատի/ Կը յայտնուիմ ուրախութեան լուսանցքին/ Սիրտս/ Խելքս/ Միտքս/ Հոգիս/ Ու աչքերս կը բացուին:**




**Արձակ էջերով հանդես են եկել Անդրանիկ Սարյանը («Նուռանգիզ»), Հակոբ Պալյանը («Օննօ»), Սարգիս Կիրակոսյանը («Միալար մակընթացութիւն»), Խաչիկ Խաչերը («Կռիւ յանուն ոչնչի՞»), Զոհրապ Գիրեջյանը («Դարավերջի տղաքը»), Թամար Հովհաննիսյանը («Ծառի պատգամը»): Այս վերջինը գողտրիկ մի էջ է՝ բնության շնչառությանը, ծառի ձայնին ու ցավին ունկնդիր, նրա խորհրդին անսացողի ներբող, ծառի պես մերթ ճաք տվող սեփական ծանրությունից, մեկ ծաղկող՝ նոր ու դալար ճյուղի պես:**

**Հանդեսի հաջորդ՝ «Միջազգային գրականություն» բաժինը ներկայացնում է համաշխարհային գրականության երկու ընտրանի. XIX դարի ֆրանսիացի իմաստասեր Էռնեստ Ռընանի «Աղօթք Ակրոպոլիսի բարձունքներում» գործը՝ Պարգեւ Շահբազյանի եւ ֆրանսիացի դրամատուրգ Էժեն Իոնեսկոյի «Արքան կը մահանայ» պիեսը՝ Գասպար Տերտերյանի թարգմանությամբ:**

**«Գրականագիտական» բաժնում տեղ է գտել Դանիէլ Վարուժանի բանաստեղծության մեկնաբանությունը հոգեւոր ենթատեքստային խոր թափանցումներով եւ հետաքրքրական զուգահեռներով քրիստոնեական եւ Հեռավոր Արեւելքի կրոնամիստիկական (հնդկական) ուսմունքների հետ («Դանիէլ Վարուժանը յաւերժութեան սեմին»): Բախտիար Հովակիմյանը ներկայացնում է «Գրիգոր Զոհրապը եւ Վարդգէսը Հռիփսիմէ Սերենցյուլյանի նամակներում» հրապարակումը:**

**«Կամարը» հատկապես ուշադիր է գեղանկարչական արվեստի հանդեպ եւ իր էջերը պարբերաբար տրամադրում է թերեւս ավելի քիչ հայտնի հայ եւ օտար նկարիչների կյանքի եւ ստեղծագործության ներկայացմանը: Այս համարում այդպիսի անուն է անցյալ դարի 30-40-ականներին ստեղծագործած ռուս նկարիչ Պավել Ֆիլոնովը, որին ինչպես հոդվածագիրը՝ Վարուժան Գարաօղլանյանն է գրում. «30-ականների Սովետ Միութեան ղեկավարները «ոչ մարդ» համարած են իր հակաընկերվարական եւ այլախոհական կեցվածքի համար»: Ֆիլոնովը մահացել է գերմանական նացիստների կողմից Լենինգրադի բլոկադայի օրերին, հարյուր-հազարավոր մարդկանց պես սովամահ է եղել: Նկարչի ստեղծագործության ռեաբիլիտացիան կայացավ գորբաչովյան պերեստրոյկայի տարիներին, 1988-ին Լենինգրադի պետական թանգարանի կողմից կազմակերպած ցուցահանդեսով, այդ գործերը ավելի ուշ ցուցադրվեցին Փարիզում եւ Դյուսելդորֆում:**

**«Պատմագիտական-վաւերագրական արժեքաւոր հրատարակութիւններ» խորագրով Պարույր Աղբաշյանի անդրադարձը վերաբերում է Զավեն Մսըրլյանի «Հայոց ցեղասպանութենէն առաջ եւ ետք» (1965-2009-ին մամուլում լույս տեսած հեղինակի ուսումնասիրությունների ժողովածուն) եւ նույն հեղինակի «Հայկական հարցի հոլովոյթը՝ 1939-2010» գրքերին, որտեղ հեղինակը Հայկական հարցը քննում եւ վերլուծում է միջազգային իրադարձությունների ընդհանուր համատեքստում:**

**Պետրո Սիմոնյանի «Գիրքերու մտերմութեան մէջ» գրախոսությունը վերաբերում է սփյուռքի երեք հեղինակների վերջին հրատարակություններին՝ Ժակ Ս. Հակոբյան «Յաւերժորէն քոյդ», Հակոբ Պալյան «Ամերիկա, Ամերիկա... Երազ եւ խորտակման լքումներ», Արմեն Դարյան «Մատեան բանաւոր խօսքի»: Հանդեսի էջերը փակվում են անցյալ տարի Մ. Նահանգներում մահկանացուն կնքած բանաստեղծ Զարեհ Մելքոնյանի հիշատակի գրությամբ:**

**Հանդեսի բովանդակության այս ընդհանուր ներկայացումից զատ հարկ ենք համարում անդրադառնալ «Կամարի» այս համարի խմբագրականին՝ «Ինչու եւ որոնց համար են գրական համաժողովները» խորագրով, որտեղ Ժիրայր Դանիելյանը իր վերաբերմունքն է արտահայտում 2002-ից երկու տարին մեկ Հայաստանի գրողների միության կազմակերպությամբ կայացող Հայաստան-Սփյուռք համաժողովներին, մասնավորապես անցած տարի ապրիլին Երեւանում տեղի ունեցածին, որի կազմակերպչական, նաեւ բովանդակային մակարդակները բավականին անմխիթար են եղել եւ որի մասին դեռ Երեւանում այն ժամանակ արտահայտվեցին սփյուռքահայ մասնակիցներից շատերը: Ահավասիկ մի շարք նկատառումներ հիշյալ խմբագրականից. համաժողովին սփյուռքահայ 60 գրողի ներկայությունը եւ հայաստանցի գրողների «զանգվածային բացակայությունը» նիստերին եւ տարբեր ձեռնարկներին, ընդհուպ ապրիլի 24-ի Ծիծեռնակաբերդ բարձրանալը: Ճնշիչ է եղել անվանի սփյուռքահայ գրողների բացակայությամբ մի քանի անանունների ներկայությունը:**

**Համաժողովի անբավարար ընթացքի տպավորությամբ հիշյալ խմբագրականում նշվում է մի շարք թերություններ. ինչպես՝ մի ամբողջ նիստի հատկացվելը 2 գրքի շնորհանդեսին կամ զեկուցումների զուտ տեղեկատվական բնույթը, գիտական, առարկայական քննարկումների, առաջարկների բացակայությունը, «կազմակերպչական տարրական ծրագրաւորումն անգամ կը փայլէր իր բացակայութեամբ»:**

**«Ուրեմն դրական ոչի՞նչ կար» հարց է տալիս խմբագիրը եւ ինքն էլ պատասխանում. «Անշուշտ որ կար: Խումբ մը սփիւռքահայ գրողներ դարձան լիարժէք անդամ Հայաստանի գրողներու միութեան: Ինչպէ՞ս սփյուռքահայը այլեւս կրնայ դառնալ Հայաստանի քաղաքացի: Արդօք կ'արժէ՞ շարունակել այս համաժողովները»:**

**Մ. Բ.**

# Հենրիխ Մխիթարյան. «Հաճույքով կխաղայի ԱՊՀ առաջնությունում»

***Արաբական Միացյալ Էմիրություններում «Զենիթի» հետ կայացած հանդիպումից հետո Sportbox.ru կայքի թղթակիցը զրուցել է «Շախտյորի» եւ ՀՀ ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի հետ:***



**- Ինչո՞ւ «Շախտյորն» այդպես հեշտությամբ հաղթեց «Զենիթին»:**

- Կարծում եմ, որ թիմերը գտնվում են նախապատրաստական տարբեր փուլերում: Դրանով էլ պայմանավորված է այն փաստը, որ մենք մրցակցից ավելի թարմ էինք: Հանդիպումը մեզ համար սկզբունքային նշանակություն չուներ, սովորական ընկերական խաղ էր: Սակայն լավ է, որ հաղթեցինք: Այժմ լավ տրամադրությամբ կնախապատրաստվենք Copa del Sol գավաթի խաղարկությանը, որը կայանալու է Իսպանիայում:

**- Խաղից առաջ «Զենիթի» խաղային սխեման քննարկե՞լ եք:**

- Ոչ: Կենտրոնացել ենք միայն մեր խաղի վրա: Մարզիչը բացատրեց, թե ինչպես պետք է գործենք:

**- Խոսակցություններ կային, թե տեղափոխվելու ես «Զենիթ»:**

- Ինձ համար դրանք միայն խոսակցություններ են: Ներկայումս «Շախտյորի» խաղացող եմ եւ ուրիշ ոչ մի բանի մասին չեմ մտածում:

**- Ի՞նչ կասես ներկայումս լայնորեն քննարկվող ԱՊՀ-ի լիգա ստեղծելու գաղափարի մասին:**

- Դա ֆուտբոլային չինովնիկների գործն է: Անձամբ ինձ համար հաճելի կլիներ ԱՊՀ երկրների առաջնությունում մշտապես խաղադաշտ դուրս գալ ոչ միայն Ուկրաինայի առաջնության մասնակիցների, այլեւ տարբեր երկրների թիմերի հետ հանդիպումներում:

**- Որքանո՞վ եք ներկայումս պատրաստ «Բորուսիայի» հետ չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի մրցավեճին:**

- Պատրաստվածության աստիճանը տոկոսներով չեմ կարող գնահատել: Դա մարզիչը կարող է ասել: Կմարզվենք նրա ցուցումներով: Համոզված եմ, որ «Բորուսիայի» հետ մրցավեճին մարտական պատրաստվածությամբ կներկայանանք: Չէ՞ որ մինչ այդ մի շարք հանդիպումների ենք մասնակցելու:

**- Ինչո՞ւ ակումբներում իրենց վառ դրսեւորող հայ ֆուտբոլիստները նույն կերպ չեն խաղում հավաքականում:**

- Դժվար է ասել: Հավաքական հրավիրվող բոլոր ֆուտբոլիստներն էլ ամեն ինչ անում են, որպեսզի օգնեն մեր ընտրանուն հաղթելու: Յուրաքանչյուրը ներդնում է իր լրիվ ուժերը: Չեմ կարծում, թե որեւէ մեկն այդ հարցում թերանում է:

**- Դու դարձար ԱՊՀ երկրների 2012-ի լավագույն ֆուտբոլիստ: Ցանկություն չունե՞ս երջանկություն որոնել Արեւմտյան Եվրոպայում:**

- Ես գործող պայմանագիր ունեմ «Շախտյորի» հետ, ուստի այդ հարցի առնչությամբ ոչինչ ասել չեմ կարող:

# «Շախտյորը» նախապատրաստությունը կշարունակի Իսպանիայում

Արաբական Միացյալ Էմիրություններում ուսումնամարզական հավաքն ավարտելուց հետո «Շախտյորն» ընդամենը մեկ օրով վերադարձավ Դոնեցկ, իսկ այսօր կեսօրին կուղեւորվի Իսպանիա, որտեղ կմասնակցի արդեն ավանդական դարձած Copa del Sol գավաթի խաղարկությանը:

Մրցաշարի կազմակերպիչը Նորվեգիայի ֆուտբոլի պրոֆեսիոնալ լիգան է: Մասնակից 12 թիմերը բաժանվել են 2 խմբի, որոնց հաղթողներն էլ կվիճարկեն գավաթը: Հաղթող թիմը կստանա 50 հազար եվրո, պարտվողը՝ 30 հազար:

«Շախտյորն» առաջին հանդիպումը կանցկացնի հունվարի 25-ին՝ մրցելով Շվեդիայի «Գյոթեբորգի» հետ: Հունվարի 28-ին «հանքափորների» մրցակիցը կլինի Նորվեգիայի «Ռոստենբորգը»: 3 օր անց թիմը կմրցի Մոսկվայի ԲԿՄԱ-ի հետ: Յուրաքանչյուր թիմ խմբում կանցկացնի 3-ական հանդիպում:

Այս մրցաշարի յուրահատկությունն այն է, որ ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի 11 մ հարվածաշար:

# Շաքիրան ու Պիկեն որդուն Միլան են անվանել

35-ամյա կոլումբիացի հանրահայտ երգչուհի Շաքիրայի եւ «Բարսելոնի» 25-ամյա պաշտպան Պիկեի նորածին որդուն Միլան են անվանակոչել: Նա կկրի Պիկե Մեբարակ ազգանունը:

Շաքիրան ծննդաբերել է հունվարի 22-ի երեկոյան Բարսելոնի ծննդատներից մեկում: Ծննդաբերությունը հաջող է անցել, նորածինն իրեն լավ է զգում: Ծնողները հայտնել են, որ Միլանն արդեն «Բարսելոնի» անդամ է դարձել:

Շաքիրայի եւ Պիկեի սիրավեպը սկսվել էր 2010-ին: Միայն 2011-ի մարտին նրանք պաշտոնապես հայտարարեցին այդ մասին: Պիկեն «Բարսելոնի» առաջատար ֆուտբոլիստներից մեկն է, նրա կազմում 2 անգամ նվաճել է չեմպիոնների գավաթն ու հաղթող է ճանաչվել աշխարհի թիմային առաջնությունում: Իսպանիայի հավաքականի կազմում էլ նա դարձել է աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն:

Շաքիրան ոչ միայն հանրահայտ լատինաամերիկուհի երգչուհի, այլեւ երաժշտական պրոդյուսեր է: Նա նաեւ բարեգործությամբ է զբաղվում:

# Սերենա Ուիլյամսի անակնկալ պարտությունը



Մելբուռնում ընթացող թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում հայտնի դարձան կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: Քառորդ եզրափակիչ հանդիպումներից պայքարի արտասովոր լարվածությամբ աչքի ընկավ Ռոջեր Ֆեդերերի եւ Ժո-Ուիլֆրիդ Տսոնգայի մրցախաղը, որը տեւեց 3 ժամ 34 րոպե: Խաղի ընթացքում Ֆեդերերը 2 անգամ հաշվի մեջ առջեւում էր, սակայն մրցակցին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը (7-6, 4-6, 7-6, 3-6): Վճռորոշ 5-րդ մրցափուլում հաղթելով 6-3 հաշվով, Ֆեդերերը մտավ կիսաեզրափակիչ, որտեղ կմրցի բրիտանացի Էնդի Մարեյի հետ: Վերջինս հաղթեց ֆրանսիացի Ժերեմի Շարդին (6-4, 6-1, 6-2): Հիշեցնենք, որ կիսաեզրափակիչ մյուս զույգը կազմել են Նովակ Ջոկովիչն ու Դավիթ Ֆեռերը:

Կանանց մրցապայքարում մեծ անակնկալ գրանցվեց: Պայքարից դուրս մնաց ամերիկուհի Սերենա Ուիլյամսը, որը պարտվեց իր հայրենակցուհի Սլոան Սթեֆենսին (6-3, 5-7, 4-6): Վերջինս կիսաեզրափակիչում կմրցի բելառուս Վիկտորիա Ազարենկոյի հետ, որը 7-5, 6-1 հաշվով հաղթեց ռուսաստանցի Սվետլանա Կուզնեցովային: Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Մարիա Շարապովան ու չինացի Լի Նան:

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը շարունակում է Կառլսենի հետապնդումը

**Վեյք Ան Զեեի մրցաշարի 10-րդ տուրը հաղթական էր Լեւոն Արոնյանի համար, որն արդեն 38-րդ քայլին ստիպեց հանձնվել չինացի գրոսմայստեր Վան Հաոյին: Այդ հաջողության շնորհիվ Արոնյանը 6,5 միավորով հավասարվեց Վիշվանաթան Անանդին, որը հաշտություն կնքեց Սերգեյ Կարյակինի հետ: Ավելի ուշ նրանց միացավ նաեւ ճապոնացի գրոսմայստեր Հիկարու Նակամուրան, որը պարտության մատնեց իտալացի Ֆաբիանո Կարուանային: Վերջինս ունի 4,5 միավոր:**

**Իսկ մրցաշարային աղյուսակը 8 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել Մագնուս Կառլսենը, որը հերթական հաղթանակը տոնեց Էրվին Լ Ամիի հետ մրցախաղում: Վերջինս 3 միավորով 13-րդ տեղում է:**

**Մրցաշարում իր 2-րդ հաղթանակը տոնեց հունգարացի գրոսմայստեր Պետեր Լեկոն, որի մրցակիցն Իվան Սոկոլովն էր: Լեկոն վաստակեց 5,5 միավոր: Նույնքանի արդյունք ունի նաեւ Սերգեյ Կարյակինը: Մրցաշարում անհաջող հանդես եկող աշխարհի նախկին չեմպիոնուհի Հոու Յիֆանը 2-րդ հաղթանակը տոնեց Պենտալա Հարիկրիշնայի հետ մրցախաղում: Յիֆանը վաստակեց 3,5 միավոր եւ աղյուսակի վերջին հորիզոնականը զիջեց 2,5 միավոր ունեցող Իվան Սոկոլովին:**

**Այսօր մրցաշարում հանգստյան օր է, իսկ վաղը կկայանան 11-րդ տուրի հանդիպումները: Լեւոն Արոնյանը սեւերով կմրցի Հիկարու Նակամուրայի հետ, Կառլսենի մրցակիցը կլինի Վան Հաոն: Կկայանան նաեւ Լեկո-Վան Վեյի, Կարյակին-Սոկոլով, Յիֆան-Անանդ, Լ Ամի-Հարիկրիշնա, Գիրի-Կարուանա պարտիաները:**

**B խմբի մրցաշարի միանձնյա առաջատար Սերգեյ Մովսիսյանը 10-րդ տուրում կարճատեւ պայքարից հետո 23-րդ քայլին հաշտություն կնքեց Դանիլ Դուբովի հետ: 10 տուրից հետո Մովսիսյանն ունի 7 միավոր: Նրան միավորներով հավասարվեց Ռիխարդ Ռապպորտը, որը հաղթեց Ալեքսանդր Իպատովին: 6,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Արկադի Նայդիչը եւ Յան Սմիթսը: Նայդիչը ոչ-ոքի խաղաց Պրեդրագ Նիկոլիչի հետ, իսկ Սմիթսը հաղթեց Սիպկե Էռնստին:**

**C խմբի մրցաշարում բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 58-րդ քայլին պարտվեց Իսրայելի ներկայացուցիչ Իգոր Բիտենսկուն: Վերջինս վաստակեց 5 միավոր եւ հավասարվեց Մխիթարյանին:**

# Նորայրը հանդես կգա Ասլանյան ազգանունով



**Հոլանդական «Էմեն» ակումբում հանդես եկող Նորայր Մամեդովը ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայից հրավեր է ստացել մասնակցելու փետրվարի 5-ին Վալանսում կայանալիք Հայաստան-Լյուքսեմբուրգ հանդիպմանը: Մամեդովը armsport.am կայքին տեղեկացրել է, որ արդեն փոխել է ազգանունը: Նա այսուհետ կրելու է Ասլանյան ազգանունը, որը գրանցված է նրա նոր անձնագրում:**

**Նորայրը նաեւ տեղեկացրել է, որ ինքը շատ է ցանկանում ներկա գտնվել ՀՀ հավաքականի ընկերական այդ հանդիպմանը, ուստի խնդրելու է թիմի գլխավոր մարզչին, որպեսզի թույլատրի մեկնելու Ֆրանսիա: Բանն այն է, որ Հոլանդիայի 1-ին խմբի խաղացանկով այդ օրերին հանդիպումներ են նախատեսված:**

**Հիշեցնենք, որ Նորայրն անցյալ տարի էր գրավել Հայաստանի հավաքականի մարզիչների ուշադրությունը: Սակայն ազգանվան հետ կապված խնդիրների պատճառով նրա նորամուտը հետաձգվեց:**

# «Միկան» առաջին հավաքը կանցկացնի Կիպրոսում

**2012/13-ի ֆուտբոլի Հայաստանի առաջնության ավարտական փուլի հանդիպումներին նախապատրաստվող «Միկան» մարզումները վերսկսել է հունվարի 21-ից: Թիմի մարզաբազայում ֆուտբոլիստները Ժոլտ Հոռնյակի գլխավորությամբ ամենօրյա ծանրաբեռնված պարապմունքներ են անցկացնում:**

**«Շիրակի» հետ երկրի չեմպիոնի տիտղոսի համար պայքարող «Միկան» ձմռանը 2 զգալի կորուստ ունեցավ: Թիմի հիմնական դարպասապահ Գեւորգ Կասպարովը մինչեւ այս տարվա օգոստոսի 1-ը պայմանագիր է կնքել Իրանի «Զոբ Ահանի» հետ, որի կազմում հաջող մրցելույթներ է ունենում: Իսկ «Միկայի» արդյունավետ հարձակվողներից մեկը՝ Նարեկ Բեգլարյանը մինչեւ առաջնության ավարտը վարձավճարով հանդես է գալու Կապանի «Գանձասարում»:**

**«Միկան» մինչեւ փետրվարի 11-ը մարզումները կշարունակի Երեւանում, իսկ հաջորդ օրը կմեկնի Կիպրոս, որտեղ ուսումնամարզական առաջին հավաքը կանցկացնի: Այնտեղ նախատեսված է 4 ընկերական հանդիպում անցկացնել: Մրցակիցներից 2-ն արդեն հայտնի են: Առաջին խաղը «Միկան» կանցկացնի փետրվարի 18-ին՝ մրցելով ՌԴ առաջին խմբի առաջնության մասնակից «Ուֆայի» հետ: Հիշեցնենք, որ այդ թիմում է խաղում ՀՀ հավաքականի թեկնածու Միխայիլ Մարկոսովը: Փետրվարի 21-ին «Միկան» ուժերը կչափի Օրենբուրգի «Գազովիկի» հետ: Մյուս 2 մրցակիցները դեռեւս անհայտ են:**

# Ռոբերտ Արզումանյանը նոր թիմ է որոնում

**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը նոր ակումբ է որոնում: Անցյալ տարվա սեպտեմբերին նա մեկամյա պայմանագիր էր կնքել Խաբարովսկի «ԲՄԱ Էներգիայի» հետ, որը գլխավորում էր Ալեքսանդր Գրիգորյանը: Վերջինիս պաշտոնանկությունից հետո թիմում նոր ֆուտբոլիստներ են ընդգրկվել: Ըստ գործող կարգի, ՌԴ առաջնության առաջին խմբի թիմերում թույլատրվում է հանդես գալ միայն 3 լեգեոնականի: Ուստի Ռոբերտ Արզումանյանը ցանկանում է հեռանալ թիմից, որի կազմում հաստատուն տեղ չունի: Ներկայումս նա գտնվում է Մոսկվայում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# «Իրանի մնայուն ժառանգությունը պաշտոնապես գրանցվեց Ադրբեջանի Հանրապետության անունով»

## *«Ադրբեջանը զավթեց թառը»*

***Այս վերնագրերի ներքո իրանական «Դոնյայե Էղթեսադ» («Տնտեսական աշխարհ») օրաթերթը 2012 թ. դեկտեմբերի 11 եւ 12 հաջորդական համարներում անդրադարձել է Ադրբեջանի նոր քյալլագողությանը՝ թառ երաժշտական գործիքի յուրացմանը: Թեհրանի մեր աշխատակցի թարգմանությամբ ներկայացնելով նյութը, հրավիրում ենք մեր մասնագետներին ըստ էության արձագանքելու միջազգային արժեքների ադրբեջանական այս նորագույն յուրացման փասին:***

ԽՄԲ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության հանձնախմբի յոթերորդ նիստում թառի ավանդական գործիքաշինական ու նաեւ նվագելու՝ կատարողական զանազան ձեւերը գրանցվեցին Ադրբեջանի Հանրապետության անունով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության հանձնախումբը Փարիզում տեղի ունեցած իր յոթերորդ նիստում չորս պարագաներ ավելացրեց աշխարհի մշակութային ժառանգության իր ցանկին, որտեղ թառ երաժշտական գործիքի շինությունն ու նվագելը գրանցվեց Ադրբեջանի Հանրապետության անունով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնախմբի զեկույցում, ազերիների կողմից ներկայացված, թառի արտադրության եւ նվագելու ավանդական ձեւերը գրանցվեցին նրանց անունով:

Մինչդեռ թառը ավելի շատ որպես իրանական գործիք է ճանաչված աշխարհում եւ դարերի անցյալ ունի Իրանում:

Ինչպես հաղորդել է Իրանի մշակութային ժառանգություն լրատվական կազմակերպությունը, Իրանը ոչ մի մասնակցություն չի ունեցել այս գործարքի մշակման եւ առաջարկման քայլերում, մինչդեռ թառը աշխարհով մեկ ճանաչված է որպես ամենահին եւ տարածված իրանական նվագարան:

Ադրբեջանի Հանրապետությունը, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին աշուղներին էր իր անունով գրանցել տվել, այս անգամ էլ թառ նվագարանն է իր անունով հռչակել:

Ըստ այդ զեկույցի՝ թառը լարային նվագարան է, որ պատրաստվում է թթի ծառի փայտից: Այն երկար կոթ ունի, որի վրա էլ լարերն են ամրացված, որն էլ պատրաստվում է Ադրբեջանի գյուղերում եւ քաղաքներում:



ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկույցում ասվում է նաեւ, որ թառը ավանդաբար նվագվում է հարսանյաց եւ այլ խնջույքներում, զանազան տոնակատարությունների, հյուրասիրությունների եւ նիստերի ժամանակ:

Զեկույցում ասված է նաեւ, որ թառաշինությունը դարեր եւ տարիներ շարունակ ավանդաբար փոխանցվել է սերնդեսերունդ եւ հասել է մինչեւ մեր օրերը, նույնպես այդ նվագարանի օգտագործումն է վարպետ կատարողների կողմից ավանդաբար փոխանցվել ձեռքից ձեռք եւ հասել մեզ:

Այս նվագարանը, որը կազմված է մեջը դատարկ գլխից եւ երկար կոթից, 8-ի նման է եւ 6 լար ունի, նվագվում է կնտնտոցի միջոցով:

Թառը տարածված նվագարան է Միջին Արեւելքի երկրներում, Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում՝ ժողովրդական երաժշտությունը ներկայացնելու համար: Անցյալում իրանական թառը 5 լար է ունեցել, որին Ղոլամհոսեյն Դարվիշը ավելացրել է նաեւ 6-րդը, որը եւ գործ է ածվում մինչեւ այսօր:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն թառի գրանցման հետ միաժամանակ գրանցել է նաեւ ալժիրական հարսանեքային մի սովորություն, ավստրիական դիմակահանդեսային մի պարագա ու նաեւ ժողովրդական մի էպոս (1) Ալժիրի, Ավստրիայի եւ Հայաստանի անուններով:

Իրանի Երաժշտության տան տնօրենության ղեկավարի հայտարարության համաձայն՝ այս խմբի վերջին նիստում որոշվել է նույն Տան ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենի մասնակցությամբ մի հանձնախումբ կյանքի կոչել՝ թառը Ադրբեջանի անունով գրանցելու խնդիրը հետապնդելու համար:

ԻՌՆԱ լրատվական գործակալության հաղորդմամբ՝ պարոն Մուհամմադ Սարիրը ասել է. «Երաժշտության տան ուսումնասիրությունների կենտրոնը թառը Ադրբեջանի անունով գրանցելու խնդիրը հետապնդելու համար նիստ է գումարելու, որտեղ քննության է ենթարկելու սույն արձանագրության փաստարկները: Որովհետեւ խնդիրը միջազգային է, եւ չի կարելի առանց ուսումնասիրելու դրան անդրադառնալ: Ուսումնասիրությունների կենտրոնը այս խնդիրը քննելով եւ մանրամասնելով՝ գտնելու է այն մեկնաբանելու եւ փաստելու հնարավորությունը: Որ ասում են, թե թառը իրանական երաժշտության հիմունքների վրա է Ադրբեջանի անունով գրանցվել, բավարար եւ արդարացուցիչ չէ. մենք պետք է մասնագիտորեն ուսումնասիրենք, տեսնենք, թե որոնք են ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրենքներն ու սկզբունքները այս առումով:

Ի դեպ, ադրբեջանական մեկմանաթանոց թղթադրամի վրա պատկերված է թառը: Մի բան, որ ապացուցում է, թե այդ երկրի պատասխանատուները նախապես ծրագրել եւ ի կատար են ածել այս նվագարանի գրանցումը իրենց անունով:

**ԹՂԹԱԿԻՑ**

**Իրանական «Դոնյայե Էղթեսադ» («Տնտեսական աշխարհ») օրաթերթ**

*(1) Սասունցի Դավթի էպոսը (թարգմանիչ)*

ԽԱՌՆԱԿ ՕՐԵՐ

# Մահը թող չայցելէ...

Ալօ՞, Հայոց մայր եկեղեցիի թաղամա՞սն է...

- Այո՞, հրամմեցէք, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ թաղամասն է:
- Աւետեաններու հետ խօսիլ կ'ուզէի...
- Այո՛, ես տիկին Աւետեանն եմ:
- Ինչպէ՞ս էք տիկին Աւետեան, ի՞նչ վիճակի մէջ էք:
- Ի՞նչ վիճակի մէջ պիտի ըլլանք, բժիշկ. գիշեր ու զօր կրակներու մէջ ենք: Այժմ մեր թաղամասը երկու տուն բնակչութիւն ունի: Առաջին տունը Հայոց առաջնորդարանն է, ուր միակը կը բնակի մեր բարեշնորհ առաջնորդը՝ Շահան եպիսկոպոս Սարգիսեան, եւ երկրորդ տունը մերն է, ուր կը նստիմ ես իմ երկու դուստրերուս հետ: Վախով կը նստինք, մեզմէ մի քանի մեթր անդին կռուադաշտ է, չեն բաւեր կապարներու սուլոցները, ռումբի բեկորներ եւս կ'իյնան մեր դրկիցներու տանիքներուն վրայ, կը կարծենք որ կարգը մեզի, մեր տուներուն եւս կը հասնի:
- Բայց նման պարագաներու ինչպէ՞ս կ'անցընէք ձեր օրը:
- Տան մէջ փակուելով, տխուր երգեր երգելով, աղօթքով, մաղթելով որ մահը չայցելէ մեզ, չայցելէ ոչ մէկ հայ կամ արաբ տուն, չխնդրի որեւէ տուն, այդ տունը ո՛ր ազգին ալ պատկանի:

Խաղաղ օրերուն ամէն օր եկեղեցի կ'երթայի, որ մաս մը անդին էր մեր տունէն, հիմա, ահա քանի շաբաթ է վեր զրկուած եմ մեր Մայր տաճարէն՝ բազմահարիւրամեայ Մայր տաճարէն... Նոյնիսկ, նոյնիսկ չեմ արժանանար տարին նոր բոլորած թոռնիկիս տեսութեան, որ բռնեմ, համբուրեմ, համբուրեմ, մեր ընտանիքին ապագան:

- Տիկին Աւետեան, քանի նորամանուկ թոռնիկ ունիս, կեանքը կը շարունակուի, այդպէս չէ՞...
- Այո՛, փառք Աստուծոյ, կանք, պիտի մնանք, նաեւ շատանանք, ըսած է հայ բանաստեղծը...
- Գիշեր բարի, տիկին Աւետեան, սիրեցի ձեր լաւատեսութիւնը:
-Բարի գիշեր, բժիշկ, շնորհակալ եմ...

**ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ**
**Հալէպ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի գործընկերներ,

Վաղը՝ հունվարի 24-ին, ժամը 14:00-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր գրասենյակում կկայանա ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի եւ «Սինոփսիս Արմենիա» ընկերության տնօրեն Հովիկ Մուսայելյանի համատեղ մամուլի ասուլիսը:




# Ռուս-ամերիկյան «ոչ բարեկամություն» Հարավային Կովկասում

*1-ին էջից*

Այս համատեքստում հիշեցնենք, որ Ադրբեջանում պարբերաբար կրկնվում են Իրանի հանդեպ տարածքային նկրտումներ պարունակող հայտարարությունները, իսկ երկու տարի առաջ Բաքվում մի քանի հարյուր ցուցարարներ հանրահավաք-երթ էին անում՝ «Ռուսի-փարսի-էրմանի՝ Ազարբայջան դուշմանի» բովանդակությամբ պաստառներով: Չմոռանանք նաեւ, որ ռուսական կողմի համոզմամբ՝ Բաքուն դիտավորյալ Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի վարձակալման ժամկետն ավելացնելու դիմաց խիստ բարձր գին պահանջեց Մոսկվայից, հստակ իմանալով, որ Ռուսաստանն այդ գնով կայանը չի վարձակալի: Ի դեպ, Սերգեյ Լավրովը Գաբալայի վերաբերյալ օրերս հայտարարեց. «Այդ թեման փակված է»:

Այս ամենը, մանավանդ այն, որ Արեւմուտքը լրջորեն հետաքրքրված է Կասպից ծովի ռեսուրսներով, Իրանի բոլոր հարեւաններին հակաիրանական ճամբարում ներառելով, ու եթե հաշվի առնենք նաեւ, որ Կասպից ծովի ռեսուրսների տիրելու համար Ադրբեջանը խնդիրներ ունի Ռուսաստանի հետ, ու բացի սրանից՝ Ադրբեջանն Իրանի այն հարեւաններից է, որին Իրանի դեմ տրամադրելու խնդիր չկա, հիմք են տալիս Մոսկվային ուժեղացնելու իր քաղաքական, տնտեսական ու հատկապես ռազմական ներկայությունը տարածաշրջանում, իսկ Մոսկվան դա կարող է կատարել միայն իր տարածաշրջանային դաշնակիցների միջոցով:

## Օգտագործելով Ստեփանակերտի օդանավակայանը

Բնականաբար առաջին հերթին՝ Հայաստանի միջոցով: Հիշեցնենք, որ հունվարի 15-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ իշխանության բոլոր ճյուղերի առջեւ ունեցած ելույթում ընդգծեց. «Հայ-ռուսական համագործակցությունը Հայաստանի անվտանգության հիմնական բաղադրիչն է»: Այս համապատկերում, նկատենք, Հայաստանում տեղակայված Գյումրու 102-րդ բազան՝ կապված «Ռուսաստանին ու իր դաշնակիցներին վտանգ սպառնացող աշխարհաքաղաքական հնարավոր փոփոխությունների ու զարգացումների հետ», արագ տեմպերով համալրվում է զինծառայողներով: Ըստ որում՝ ռուսական աղբյուրները, որպես այդ «հավանական վտանգներ», նշում են Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա հնարավոր հարձակումը, ինչպես նաեւ Իսրայելի կողմից Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների սկսման հնարավորությունը: Հետեւաբար, եթե ռուսական ռազմական ուժերը տեղափոխվում են Ղարաբաղ, ապա Մոսկվան ստանում է Իրանի հետ սահմանի մի զգալի հատվածի լիակատար վերահսկողություն, մյուս կողմից էլ, Ղարաբաղում ռուսական զորքի առկայությունը հնարավորինս կհետաձգի Բաքվի՝ հայկական կողմերի հետ պատերազմը: Այս առումով խիստ ուշագրավ է, որ անցյալ տարի ՄԱԿ-ը ՀԱՊԿ-ին տրամադրեց «խաղաղապահ առաքելություն իրականացնելու թույլտվություն»: Ու ամենեւին էլ պետք չէ բացառել, որ Ստեփանակերտի նորակառույց օդանավակայանի անվտանգության ապահովումը դառնա ՀԱՊԿ-ի խաղաղապահ առաջին առաքելությունը, ընդգծենք, որ ռուսական զորքն այս պատրվակով հրաշալի առիթ կստանա մտնելու Ղարաբաղ, ինչի ցանկությունը Մոսկվան երբեք էլ չի թաքցրել: Ըստ որում՝ չի բացառվում, որ Մոսկվան Ստեփանակերտի օդանավակայանն «օգտագործի» այլ պետությունների հետ համատեղ՝ ճիշտ ռուսական Ուլյանովսկի օդանավակայանի նման, որը, հիշեցնենք, Ռուսաստանն օգտագործում է Աֆղանստանում առաքելություն իրականացնող ՆԱՏՕ-ի հետ համատեղ:

Փաստորեն, որքան Ադրբեջանը մոտենա ՆԱՏՕ-Իսրայել «միությանը»՝ ընդդեմ առավելապես Իրանի, այնքան Մոսկվան իր «պատասխան ոչ բարեկամական քայլերին» ծրագրի շրջանակներում կավելացնի ու կամրապնդի իր դիրքերը տարածաշրջանում, ինչի հնարավորությունը ռազմավարական դաշնակից Հայաստանն ու Իրանի հետ երկար սահմանագիծ ունեցող ԼՂՀ-ն նրան տալիս են: Կրկնենք, կոնկրետ Ղարաբաղում ռուսական ռազմական ներկայությունը վերահսկելի կդարձնի Իրանի հետ սահմանը, ինչպես նաեւ հեռու կպահի հայկական զույգ պետությունների դեմ Բաքվի հավանական պատերազմական նկրտումների իրագործումը, բայց, մյուս կողմից, բավականաչափ սրություն կհաղորդի տարածաշրջանին, ինչից խուսափել կարծես թե ոչ մի սցենարով հնարավոր չէ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 23.1.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: